Azg
Ազգ
20 ՕԳՈՍՏՈՍ 2008 ՇԱԲԱԹ 149 (4043)

Էրդողան. «Հայաստանի հետ բանակցություններ կսկսվեն»

Սամբուլում ընթացող «Թուրքիա-Աֆրիկա համագործակցության գագաթաժողովի» մասնակից երկրների ղեկավարների ոչ պաշտոնական ճաշկերույթում ելույթ ունենալիս Թուրքիայի վարչապետ Էրդողանը հայտարարել է, որ օգոստոսի 20-ին Ադրբեջան կատարելիք մեկօրյա այցից հետո «Կովկասում կայունության եւ համագործակցության միություն» ստեղծելու շրջանակում բանակցություններ կսկսվեն Հայաստանի հետ: Ըստ թուրքական «Զամանի», Էրդողանը նշելով, որ «Օրերս Կովկասում ծագած հայտնի դժվարությունների պատճառով էլ մի նոր քայլ կատարելու նպատակով, ցանկանում ենք Կովկասում կայունության եւ համագործակցության միություն ստեղծել: Այդ նպատակով անցյալ շաբաթ այցելել եմ Մոսկվա եւ Թբիլիսի: Վաղն էլ մեկնում եմ Ադրբեջան: Դրանից հետո ի շարունակություն մեր ընկերների սկսած աշխատանքի, բանակցություններ կսկսվեն Հայաստանի հետ: Հուսով ենք, որ այս 5 երկրներում՝ Հայաստանում, Ադրբեջանում, Վրաստանում, Ռուսաստանում եւ Թուրքիայում այդ աշխատանքներն արագորեն զարգացնելու միջոցով կկարողանանք Հարավային Կովկասը դարձնել կայունության եւ համագործակցության տարածաշրջան», -ասել է Թուրքիայի վարչապետը:

Ըստ Ռեւազ Գաչեչիլաձեի, Ռուսաստանը ձգտում է ոչ թե ուղղակի խլել Աբխազիան եւ Հարավային Օսիան, այլ ունենալ հլու վրաց կառավարություն

Հայաստանում Վրաստանի դեսպանի բացառիկ հարցազրույցը «Ազգ»-ին

ԱՐԱՍՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Վրաստանում վերջին օրերի իրադարձությունները զարգացումների ու հաղթականության սուբյեկտների այնպիսի ընդգրկում ունեցան, որ խնդրահարույց կմնան դեռ շատ հարցերի վերաբերող մոտեցումներն ու վերաբերմունքը: Ներկա իրավիճակի եւ տարածաշրջանի կայունության առումով հնարավոր արձագանքների մասին «Ազգի» հետ զրույցում Վրաստանի դիրքորոշումն է ներկայացնում Հայաստանում Վրաստանի դեսպան Ռեւազ Գաչեչիլաձեն:

- Ռուսական զինուժը երեկ սկսել է զորքի տեղաշարժը: Ինչպիսին է իրավիճակը Վրաստանում եւ ի՞նչ գնահատական կարելի է տալ դիտարկվող տեղաշարժին:

- Երեկ ռուսաստանյան կողմը հայտարարել է, որ պետք է առանձնացնել զորքերի դուրսբերում եւ հեռացում հակակցություններ: Ռուսական կողմի մոտեցմամբ, ամենայն հավանականությամբ, երբ

բանակցություններ էին ընթանում Սարկոզիի հետ, այդ պահը չի ընդգծվել: Ըստ ստորագրված պայմանագրի, խոսքը հենց զորքերի դուրսբերման մասին է մինչեւ այն գիծը, որտեղ էին դրանք մինչեւ ռազմական գործողությունները, այսինքն՝ այդ զորքերը պետք է վերադառնան Յուսիսային Կովկաս: Բայց հիմա, Ռուսաստանի մոտեցմամբ, զորքերը կտեղափոխվեն մինչեւ Ցխինվալ, ընդ որում, նրանք պատրաստվում են եւ հայտարարել են, թե իրավունք ունեն խաղաղապահ զորամիավորումների մի մասը թողնելու բուֆերային գոտում՝ Հարավային Օսիայի շրջակայքում 14 կմ շառավղով: Նշեմ, որ դա ընդգրկում է նաեւ Գորի քաղաքը: Այսինքն՝ զորքի դուրսբերում տեղի չի ունենում, այլ սկսվել է միայն մասնակի հեռացում: Դրա համար էլ լավատեսության հիմք ես չունեմ:

Տես էջ 5

«Հրավերի նպատակը սոսկ ֆուտբոլային հանդիպում դիտելը չէ

Հետեւաբար Անկարան հանդիպման առնչությամբ պետք է ունենա ակնկալիներ, ինչպես նաեւ մտահոգություններ Երեւանում»

ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը Հայաստան-Թուրքիա ֆուտբոլային հանդիպումը միասին դիտելու համար Թուրքիայի նախագահ Աբդուլլահ Գյուլին երեւան հրավիրելու պատասխանատվության մասին հայտնել էր դեռեւս հունիսի 23-ին Մոսկվայում հայ համայնքի ներկայացուցիչների հետ հանդիպմանը: Հրավերը լայն արձագանք էր գտել Հայաստանում, Թուրքիայում, ԱՄՆ-ում, Եվրոմիությունում եւ տարածաշրջանում: Դրան հայկականների հետ իսկույն անդրադարձել էին ափսարհի առաջնակարգ լրատվամիջոցները, իսկ թուրքական կենտրոնական թերթերը սկսած հունիսի 23-ից գրեթե ամեն օր արձարձում էին հրավերի հարցը:

Երկու երկրների ազգային հավաքականների հանդիպումը նշանակված է սեպտեմբերի 6-ին: Թեեւ նախագահ Գյուլը դեռեւս հրավերին չի պատասխանել, սակայն անկախ պատասխանից, որքան մոտենում է հանդիպման օրը, այնքան վերարձարձումների հարցում ակտիվանում են թուրքական թերթերը, աշխուժորեն քննարկելով հրավերին Անկարայի պատասխանի հավանական տարբերակները:

Թեեւ այդ առումով հետաքրքիրը «Ռադիկալի» օգոստոսի 17-ի համարում «Գյուլը կգնա՞ Հայաստան» վերնագրով հրապարակված հոդվածն է: Սիա թե ինչ է գրել թուրքական թերթը.

Տես էջ 8

Ստորագրահավաք հայ-թուրքական սահմանի բացման դեմ

Այդ մասին երեկվա համարում տեղեկացրել է «Օրթադոդու» թերթն, ըստ որի՝ ստորագրահավաքն սկսել է Իզմիրում գործող ադրբեջանական մշակույթի կենտրոնը: Ստորագրահավաքի առնչությամբ առաջ հայտարարության մեջ կենտրոնի նախագահ Ջեմալ Մեհմեդիանօղլին ասել է, որ Հայաստանն առանց պատերազմի պետք է ազատի գրաված տարածքները, իսկ դրա համար անհրաժեշտ է շարունակել նրա դեմ Թուրքիայի կողմից կիրառվող շրջափակումը: Վերջում նա ավելացրել է. «Պետք է լինել մեկ ազգ, երկու պետություն եւ մեկ բանակ»: Ցեղասպանության պնդումներով Հայաստանը խրախուսում է Թուրքիայի դեմ թշնամանքը: Նա միաժամանակ ցուցադրաբար արտահայտվելով Թուրքիայի հետ բարեկամանալու մասին, պահանջում է սահմանների բացումը»:

Հ. Ծ.

Գյուլի ուղերձը Պոլսո հայոց պատրիարքին

Երեկ Թուրքիայի նախագահ Աբդուլլահ Գյուլն աշխատակազմի ղեկավարի միջոցով շուտափույթ արտահայտություն է մաղթել Պոլսո հայոց պատրիարք Մեսրոպ Բ Մութաֆյանին: Չանխայա նստավայրից սացած տեղեկության համաձայն, նախագահ Գյուլը, որ գտնվում էր Սամսունում, պատրիարքարան է ուղարկել աշխատակազմի ղեկավար Ալնի Կարսլիօղլուին, որն էլ այնտեղ հանդիպել եւ Գյուլի բարեմաղթանքներն է հայտնել Մութաֆյան պատրիարքին: Այդ մասին կայքէջում նշել է թուրքական «Զաման» թերթը:

Հ. Ծ.

Լրագրողի հանդեպ բռնություն կիրառած մարդիկ չեն հայտնաբերված

Օգոստոսի 1-ին «Հայկական ժամանակ» օրաթերթի լրագրող Լուսինե Բարսեղյանի հանդեպ բռնություն կիրառած անձինք դեռեւս հայտնաբերված չեն: Քննությունը վարում է Նոր Նորքի ոստիկանությունը, իսկ անձամբ Լ. Բարսեղյանը համոզված է, որ նրանք այդպես էլ չեն հայտնաբերվի: Նա շարունակում է համոզմունք տածել, թե իր մասնագիտական գործունեությունն է զայրացրել էրեբունու թաղապետ Մհեր Սեդրակյանին, իր խոսքով՝ որի «լակոտներն էլ գործել են այդ խեմնելի արարքը»:

ՀՐԱՏԱՊ

«Վրաստանի միակ ճանապարհը ֆեդերալ պետությունն է»

Սամցխե-Ջավախքի եւ Քվեմո Քարթլիի հայկական հասարակական կազմակերպությունների խորհուրդը հանդես է եկել հայտարարությամբ, որում մասնավորապես ասվում է. «Ակնհայտ է, որ ազգամիջյան խնդիրները ռազմական ճանապարհով լուծելու փորձերից գլխավոր տուժողը խաղաղ բնակչությունն է, մենք՝ Սամցխե-Ջավախքի եւ Քվեմո Քարթլիի հայ ազգաբնակչության հասարակական ներկայացուցիչներս, ելնելով մեր երկրում խաղաղության եւ կայունության, երկրի ապագայի նկատմամբ մեր մտահոգությունից, գտնում ենք, որ Վրաստանի տարածքային ամբողջականությունը եւ գերիշխանությունը վերականգնելու որոնես կայուն եւ ժողովրդավար զարգացման երախիտ՝ առկա ազգամիջյան խնդիրները օբյեկտիվ, արդարացի եւ իրավականորեն լուծելու նպատակով Վրաստանի պետական կառուցվածքին հարկ է տալ դաշնային (ֆեդերալ) կառուցվածք՝ բաղկացած տարածքային միավորներից եւ կենտրոնական իշխանությունից»: Հայտարարության մեջ նշվում է նաեւ՝ «Սամցխե-Ջավախքը, իր ներկա սահմաններով եւ Քվեմո-Քարթլիի սահմանակից, առավելաբար հայաբնակ բնակավայրերով, վերածել Վրաստանի պետական դաշնային կառույցի ինքնավար սուբյեկտներից մեկի՝ ինքնակառավարման լայն իրավասություններով»: Հայտարարության վերջում նշվում է. «Գիտակցում ենք, որ մեր այս հայտարարությունը միանշանակ չի ընդունվելու. փորձեր են արվելու այն սխալ մեկնաբանելու, չարաշահելու: Բայց մենք՝ իբրեւ Վրաստանի ճակատագրով մտահոգ քաղաքացիներ, չէինք կարող չկոչել այս ճշմարտությունը, որն արդեն տարիներ ի վեր ասում ենք: Մենք առաջնորդվում ենք բացառապես Վրաստանի եւ նրա բաղկացուցիչ մաս Սամցխե-Ջավախքի շահերից: Սա է պահանջում վերջին բախումների ընթացքում զոհվածների հիշատակը. սա է պահանջում հարյուր հազարավոր տեղահանվածների տունդարձի արդարացի ձգտումը. սա է պահանջում Վրաստանի ապագան»:

«Սառեցնում են, բայց չեն խզում»

Մոտավորապես այսպիսի որոշում են կայացրել ՆԱՏՕ-ի անդամ երկրների արտաքին գործերի նախարարները ընդարկելով ռուս-վրացական հակամարտությունը: Նրանք որոշել են, որ մինչեւ Վրաստանի տարածից ռուսական զորքերի դուրս բերումը սառեցնել Ռուսաստան-ՆԱՏՕ հարաբերությունները: Անդրադառնալով այս որոշմանը, Ռուսաստանի արտգործնախարարն այն որակել է միակողմանի: Ըստ նրա, ՆԱՏՕ-ն փաստորեն նախագահ Սաակաշվիլիին իր պատասխանատվության տակ է վերցրել: ՆԱՏՕ-ի անդամ երկրների արտգործնախարարների նիստը նաեւ որոշում է ընդունել ստեղծել ՆԱՏՕ- Վրաստան հանձնաժողով, քննարկելու համար երկկողմ հարցերը:

Հարձակում «Ազատություն» ռադիոկայանի ղեկավարի վրա

Օգոստոսի 18-ին Երեւանի կենտրոնում հարձակման ու ծեծի է ենթարկվել «Ազատություն» ռադիոկայանի Երեւանյան գրասենյակի ղեկավարի պատասխանատու Հրաչ Մելիքյանը, հաղորդում է «Ազատություն» ռադիոկայանը: Հրաչ Մելիքյանը հարձակումը կապում է իր մասնագիտական գործունեության հետ. «Մասնավորապես այն աշխատանքի, որ ես կատարում եմ այստեղ այս մեկ ամսվա ընթացքում: Դա ես կապում եմ մեր ռադիոկայանի, մեր ծրագրերի եւ մեր հեռարձակումների հետ: Որովհետեւ հենց այդ տղամարդը՝ հարձակվողը հայերենի էր «Ազատություն» ռադիոկայանին, մեր հաղորդումներն ու ծրագրերը»: Հրաչ Մելիքյանը մեղադրել է «Ազատություն» ռադիոկայանի Պրահայի կենտրոնակայանում: Վերջին մեկ ամիսը Երեւանյան գրասենյակի ղեկավարի պատասխանատու է: Հարձակման կապակցությամբ հայտարարություն է արել «Ազատություն» ռադիոկայանի նախագահ Ջեֆրի Գեդմինը:

«Ազգ»-ը խնդրեց դատապարտում է լրագրողների դեմ այս եւ նմանօրինակ բոլոր հարձակումները եւ հանցակատարները պահանջում գտնե մեկ անգամ հայտնաբերել եւ պատժել հանցագործներին:

Ամառային թեժություն՝ Ազգային ժողովի դրսում եւ ներսում

Երեկ հրավիրված Ազգային ժողովի արտահերթ նիստը թեժ կրեր էր բորբոքել ԱԺ դարպասներից դուրս: Օրենսդրական այն փաթեթը, որով ՀԴՄ-ների տեղադրումը պարտադիր է համարվում առեւտրի բոլոր կետերում (Երեւանում 7 քմ եւ այլ վայրերում 10 քմ-ն գերազանցող օբյեկտներում) մի քանի 100 տնտեսվարողների բերել էր ԱԺ դռների մոտ: Արտահերթ ընթացակարգով մի շարք հարակից օրենքներում փոփոխություններ նախատեսող այս օրենքն առագրեն պետք է քննարկվի եւ քվեարկվի, ինչը բազմաթիվ մտահոգությունների տեղիք է տվել հատկապես փոքր եւ միջին բիզնեսի ներկայացուցիչներին: Այն, որ մեր հատկապես տոնավաճառներում առեւտրի սպասարկման ծառայությունների բավական բարձր ցուցանիշ կա, գաղտնիք չէ ոչ մեկի համար, գաղտնիք չէ նաեւ, որ տարիներ կառավարությունը փորձում է օրենսդրորեն կարգավորել դաշտը, սակայն տնտեսվարող սուբյեկտները դիմադրում են, երբեմն հասկանալի բացատրություններով, թե այդպիսով, միեւնույն է, խոշոր տնտեսվարողները ջրից չոր դուրս կգան, մինչդեռ մանրերը նորից կտուժեն, եւ գուցե արդարների գնեն այս դաշտով թանկանան: Ու որքան էլ հարկային պետական ծառայության պետի տեղակալ Սիարոն Ջիլինգարյանը մանրամասն հիմնավորում էր, որ փաթեթի նպատակը արդյունավետ տնտեսական մեխանիզմների կիրառմամբ արդարների մասակարարման, ծառայությունների մատուցման եւ փաստաթղթավորման կանոնակարգումն է, փաթեթը

ողջունողների հետ մտահոգություն հայտնողների պակաս էլ չկար, իսկ Ազգային ժողովից դուրս ցուցարարները, գուցե նաեւ օրենսդրական նախաձեռնության մանրամասների մասին իրազեկման պակասի պատճառով, գուցե տնտավաճառների տերերի թարմ դրդմամբ շարունակում էին պնդել, որ իրենք մինչեւ վերջ դիմադրելու են ՀԴՄ-ների տեղադրմանը:

Տես էջ 2

Մարտիմեկյան դեպքերը խնող հանձնաժողովի ամառային ջանքերը կգնահատվե՞ն

Մարտի 1-2-ի իրադարձությունները քննող Ազգային ժողովի ժամանակավոր հանձնաժողովը ողջ ամառ աշխատեց, վերջին նիստերի ընթացքում լսեց ոստիկանության երեք բարձրաստիճան պաշտոնյաների՝ հասարակության իրազեկման առարկա դարձնելով մարտիմեկյան դեպքերի մի շարք ուշագրավ մանրամասներ, անգամ որոշ այնպիսի եզրակացությունների տեղիք տալով, թե իրավապահ մարմինների գործողությունները մարտի 1-ի առավոտյան համարժեք չեն եղել իրավիճակին, քանի որ «Ազատության» հրադադարից գտնված առարկաների վրայի մասնահետքերը, ոստիկանության փորձագիտական վարչության պետի խոսքով, պիտանի չեն համադրել հետագա իդենտիֆիկացիայի համար: Հասկանալի լեզվով՝ ուղղակի պայքարի չկա, որ հայտնաբերված առարկաները, այդ թվում՝ ատրճանակ, պատկանել են ցուցարարներին:

Տարբեր հանդիպումներ, հանրայնավալ փաստահավաք աշխատանքը, իրավապահ համակարգի պաշտոնյաների բացատրությունների լսումը, կարծես թե պետք է թույլ տան Աժ ժամանակավոր հանձնաժողովին եւ նրա նախագահ Սամվել Նիկոյանին՝ օգոստոսի վերջին մի հանգրվանային-միջանկյալ աշխատանքային ամփոփում ունենալու, կամ ինչպես ձեւակերպել է հենց Ս. Նիկոյանը՝ միջանկյալ զեկույց կազմելու: Այս ուրբաթ հանձնաժողովի նիստին պարզ կլինի՝ հնարավո՞ր է ունենալ այդպիսի փաստաթուղթ, թե ոչ, որը նաեւ հանձնաժողովի կատարած աշխատանքն ամառվա ընթացքում: Այս թեմայով զրուցեցինք երկու հանձնաժողովականների՝ ՀՅԿ-ական Հերմինե Նաղդալյանի եւ ՀՅԴ-ական Արծվիկ Մինասյանի հետ:

Ըստ Հ. Նաղդալյանի՝ այդպիսի միջանկյալ զեկույցը պետք է ավելի շուտ աշխատանքային փաստաթուղթ լինի, քան թե հրապարակման նյութ: Հանձնաժողովը դեռ դիմելու է ակնասեւներին, հասարակական կազմակերպություններին ներկայացուցիչներին՝ իր ձեռքի տակ հավաքված նյութն ամբողջացնելու համար: Արդյոք իրավապահների գործողությունները համաչափ էին իրավիճակին, այս հարցի պատասխանը հիմա հնչեցնելը Հ. Նաղդալյանը ճիշտ չի համարում. ամբողջական պատկերացում եւ պատասխան կարելի է ունենալ միայն երկրորդ կողմին (ընդդիմությանը- Մ.Խ.) ու նրանց ներկայացրած փաստերը կշռելով. «Ես այսօր չէի շտապի», ասաց նա:

Ս. Մինասյանի կարծիքով՝ այդպիսի փաստաթուղթ ստեղծել հնարավոր է, քանի որ հանձնաժողովն իսկապես ծավալուն աշխատանք է կատարել, թեեւ ընթացքում դեռ շատ ճշգրտումներ են լինելու: Առանց ընդդիմության ներկայացուցիչների տեսակետը լսելու դա թերի չի՞ լինի. մեր հարցին ի պատասխան վերջինս նկատեց, թե ընդդիմության տեսակետներին իրենք ծանոթ են, ակնասեւներ հրավիրելու են հանձնաժողով, եթե հնարավոր լինի՝ ընդդիմության լիդերներից եւս: Ս. Մինասյանը կրկնեց, թե իր անձնական տեսակետով իրավասու անձանց ներկայացրած փաստաթղթերով բավարար արդյունքներ չկան այն մղման համար, որ իրավապահները գործել են օրենքի տառին համապատասխան եւ գործադրել են համապատասխան ջանքեր, որպեսզի մարտի 1-ի դեպքերը չառաջանային. «Բոլորս պետք է իմանանք, որ պրոցեսը սկսվել է առավոտից, հետեւաբար առավոտյան դեպքերից շատ բան է կախված եղել»: Սեպտեմբերի առաջին տասնօրյակից հետո Եխխով մոնիտորինգի հանձնաժողովում խոսելու են Հայաստանի ստանձնած պարտավորությունների կատարման ընթացքի եւ հատկապես Աժ ժամանակավոր հանձնաժողովի կատարած աշխատանքի արդյունքի մասին. արդյոք արվե՞լ է հնարավորը, որ կատարվածը բավարար համարվի: Ս. Մինասյանի կարծիքով՝ հանձնաժողովը հնարավորինս արագ տեմպերով է աշխատում, բայց կան նաեւ օբյեկտիվ խնդիրներ՝ եւ տեղեկատվության պակաս, եւ ընդդիմության որոշ գործիչների կողմից հանձնաժողովի հանդեպ սերմանվող անվստահություն, եւ բազմաթիվ այլ պատճառներ, որոնք թույլ չեն տալիս հանձնաժողովին առավել մեծ ծավալի գործունեություն իրականացնել. «Լավ կլիներ, բոլորը համակարծիք լինեին, որ պետք է օգնել հանձնաժողովին, ոչ թե փորձեն պառակտել հանձնաժողովը»: Պատգամավորի խոսքով, խանգարիչ է նաեւ առանձին փաստահավաք խումբ ստեղծելու խոսակցությունը (դա եվրոպացիների առաջարկն էր), այժմ հանձնաժողովը բավական շատ փաստեր է հավաքել, եւ եթե ստեղծվի այդպիսի խումբ՝ հայտնի չէ, այդ փաստերը կօգտագործվե՞ն, թե՞ ոչ: Հանձնաժողովի աշխատանքի արդյունքում միջանկյալ զեկույցների հիման վրա կստեղծվի զեկույց, որի հիման վրա կինչի նաեւ հանձնաժողովի գնահատականը տեղի ունեցածի վերաբերյալ: Հանձնաժողովում ընդգրկված քաղաքական ուժերը եւս քաղաքական գնահատականներ կինչեցնեն, իսկ հանձնաժողովի հավաքած արդյունքողական բազան նաեւ իրավական հետեւանքներ կարող են առաջացնել:

ՄԱՐԻԵՏԱ ԽԵՐՍԱՏՅԱՆ

Ճանապարհների շինարարությունը կավարտվի, կսկսվի ստորգետնյա ավտոկայանատեղերի շինարարությունը

Երեւանում իրականացվող ճանապարհաշինական ծրագրերին նվիրված երեկ տեղի ունեցած մամուլի ասուլիսի ժամանակ անդրադարձավ «Երեւաննախագիծ» ինստիտուտի տնօրեն Գուրգեն Սուրենյանը: Նա նախ հայտնեց, որ այս տարի կանգկացվի գլխավոր հատակագծի իրականացման մոնիտորինգը, որի արդյունքների հիման վրա եկող տարի վերանայումներ կարվեն գլխավոր հատակագծի հնարավոր փոփոխությունների համար:

Խոսելով ճանապարհաշինական ծրագրերի մասին, Գուրգեն Սուրենյանը հիշատակեց «Այարատ» կինոթատրոնի հարեւանությամբ տրանսպորտային խոշոր հանգույցի շինարարության ավարտն ու շահագործման հանձնելը: Այնուհետեւ նա նշեց, որ այդտեղից մինչեւ Հերացու փողոց ընկած ճանապարհի տարբեր հատվածներում շինարարական աշխատանքները շարունակվում են: Դրանց ավարտից հետո Աբովյան պուրակ-Հերացի հատվածը կմիանա «Լիսի»- հիմնադրամով կառուցվող Սասայանցի մայրուղուն:

«Երեւաննախագիծ» ինստիտուտի տնօրենը հայտնեց, որ ճանապարհաշինական ծրագրերի իրականացմամբ կրճատվում է տրանսպորտային միջոցների ծառայաժամանակը, սնտեսվում է վառելիք, նվազում են արտանետումները մթնոլորտ: Այսինքն, դրանք ունենում են նաեւ բնապահպանական նշանակություն: Խանջյան փողոցի երկայնքով իրականացվող շինարարությամբ կամրջանցա մայրահաղթի արեւելյան՝ հյուսիս-հարավ միացնող ճանապարհը: Գուրգեն Սուրենյանը վստահություն հայտնեց, որ այժմ իրականացվող բոլոր ծրագրերն ընթանում են ըստ ժամանակացույցի եւ կավարտվեն նախատեսված ժամկետում, որն, ինչպես տեղեկացվել էր



ավելի վաղ, մինչեւ սեպտեմբեր ամսվա վերջն է:

Ստորգետնյա ավտոկայանատեղերի կառուցման մասին հարցին պատասխանելով, «Երեւաննախագիծ» ինստիտուտի տնօրենը հայտնեց, որ այս տարվա սեպտեմբերին մայրահաղթի կենտրոնի 5 տարբեր մասերում կսկսվի դրանց շինարարությունը: Ըստ նրա, ստորգետնյա ավտոկայանատեղերի կառուցումը հնարավորություն կտա բարձրացնելու այդ փողոցների թողունակությունը եւ անվտանգությունը:

Ա. Մ.

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ

Ուժերի հավասարակշռությունը փոփոխելն անհնար է առանց ԼՂՀ շահերը հաշվի առնելու

Ժամանակն է, որպեսզի ԵԱՀԿ Մինսկի խումբը հանդես գա առավել բարձր դիվանագիտական մակարդակով: Լադոգների հետ ձեռագրությունը այս մասին նշել է ԼՂՀ խորհրդարանի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախագահ **Վահրամ Աբրահամյանը**: Նա նաեւ հավելել է, որ ներկա մակարդակը չի համապատասխանում դիվանագիտական լուծությանը:

Մեկնաբանելով ամերիկացի համանախագահ Մեթյու Բրայզայի հայտարարությունը դարաբաղցիների՝ հանրաքվեի միջոցով ինքնորոշվելու վերաբերյալ, որի ձեւակերպումները, սակայն, հետագայում դիվանագիտական նրբությամբ նա մեղմել է BBC ռադիոկայանի ադրբեջանական ծառայությանը տված հարցազրույցում, Վահրամ Աբրահամյանն ասել է. «Համանախագահները կողմերի հետ պետք է անկեղծ լինեն եւ իրենց ընդգծումներն ու շեշտադրումները պետք է կառուցեն բանակցային գործընթացի իրողություններից ելնելով: Որեւէ այլ մոտեցում, որը կարող է բխել բանակցող կողմերից որեւէ մեկի ներքաղաքական վիճակից՝ մեզի համարում ենք անընդունելի եւ անհարիր միջնորդների կեցվածքին: Դա ինքնադատություն չէ, այլ ընդամենը բնական ցանկություն: Մեր համոզմամբ՝ BBC ռադիոկայանին տված հարցազրույցում ամերիկյան համանախագահն առաջնորդվել է նախագահական ընտրությունների նախօրեին Ադրբեջանում ներքաղաքական իրավիճակը չարելու առաջնահերթությամբ»:

Խորհրդարանականի կարծիքով, տպավորություն է ստեղծվում, թե ղարաբաղյան կողմը համաձայն է, որ հակամարտության զինված փուլի հետեւանքների վերացումից հետո, որոշակի ժամանակ անց, Լեռնային Ղարաբաղի կարգավիճակը հստակեցվի հանրաքվեի միջոցով: Նման տպավորությունը չի համապատասխանում իրողությանը: Լեռնային Ղարաբաղը բազմիցս ամենաբարձր մակարդակով հայտարարել է, որ ադրբեջանա-ղարաբաղյան հակամարտության զինված փուլի հետեւանքների վերացման հարցով Ղարաբաղը հետաքրքրված է այնքանով, որքանով Ադրբեջանը հետաքրքրություն կցուցաբերի ԼՂՀ-ն ճանաչելու եւ նրա հետ երկկողմ հարաբերություններ հաստատելու հարցում: Նշելով այս մասին, պատգամավորը նաեւ ասել է. «ԼՂՀ-ն 1994 թ. մայիսին հաստատված հրադադարի լիարժեք կողմ է, կրում է ուղղակի պատասխանատվություն տարածաշրջանում ուժերի հավասարակշռության պահպանման հարցում, եւ անհնար է ուժերի այդ հավասարակշռությունը փոփոխության ենթարկել՝ առանց ԼՂՀ ազգային, պետական շահերը նկատի առնելու»:

Իր այս անձնական տեսակետը Վահրամ Աբրահամյանը հիմնավորել է նաեւ Հարավային Կովկասում ստեղծված ներկա իրավիճակով: Ցորակցություն հայտնելով Հարավային Օսիայում զոհվածների հարազատներին եւ իր օս գործընկերներին, պատգամավորը վրաց-օսական նոր բախումն ու դրա հետեւանքներն անվանել է վրացական արկածախնդրություն: «Դա մեկ անգամ եւս վկայում է խաղաղ բանակցությունների շարունակման անհրաժեշտության մասին եւ պետք է դաս լինի բոլոր նրանց համար, ովքեր հակված են պատերազմի միջոցով խնդրի լուծմանը», ասել է նա:

«Ազգի» այն հարցին, թե արդյոք որեւէ ենթատեքստ է տեսնում խորհրդարանականը շաբաթներ առաջ Հարավային Օսիայի նախագահ Էդուարդ Կոկոյտիի՝ դարաբաղյան բանակի բարձր մարտունակության մասին արած հայտարարության մեջ, Վահրամ Աբրահամյանը պատասխանեց, որ որեւէ ենթատեքստ այդտեղ չի տեսնում, մանավանդ Ռուսաստանի միջամտության պարագայում: Միեւնույն ժամանակ, նա չբացառեց, որ ԼՂՀ իշխանությունները կարող են Հարավային Օսիային մարդասիրական օգնություն ցուցաբերել:

ԿԻՄ ՊԱՊԻՐԵՅԱՆ

Ամառային թեժություն...

1-ին էջից

ՀՅԿ-ական **Գայուս Սահակյանը**, ողջունելով հանդերձ այս նախաձեռնությունը, մտահոգություն փոխանցեց, որ ՀՂՄ-ները կարող են մի նոր մահակ կամ գործիք դառնալ, որոնցով սնտեսվարողներին անվերջ կարող են անհանգստացնել՝ սուգման մի նոր հնարավորություն է, իսկ որեւէ տոնավաճառ 70 մլն դրամի շրջանառություն չի ունենում (այս էր ավելացված արժեքով չհարկելու առաջարկվող բեմը): Ըստ նրա, աժիոտաժ չէր առաջանա, եթե այսպես հաղեցաղ Աժ չբերվեին այդ փոփոխությունները՝ հաղեցաղությունը միշտ էլ կասկածի տեղիք է տալիս: «Ժառանգության» պատգամավորները մտավախություն ունեին, որ այս փոփոխությունները նորից կվերաբերեն մաքր ձկներին՝ խոշորներին շրջանցելով, իսկ, օրինակ, ՀՅԿ խմբակցության անդամ **Գագիկ Աբրահամյանը** Ա. Չիլինգարյանի ելույթից հասկացել էր, որ հենց խոշոր սնտեսվարողներին են, մանրների հետ հավասար, բերում հարկային դաշտ:

Վաղը ինքնարկումները շարունակվելու են, մենք էլ առավել մանրամասն կդիտարկենք խնդիրը:

Երեկ նաեւ բնապահպաններն էին ցույց անում Աժ դռների մոտ, քանի որ Աժ արահերթ նիստի օրակարգում է Սեւանի էկոհամակարգի պահպանման տարեկան համալիր ծրագրում փոփոխությունների նախագիծը, որով նախատեսվում է Սեւանից բաց թողնվող ջրի առավելագույն չափաքանակ սահմանել 360 մլն խմ, ինչը բնապահպան **Կարինե Դանիելյանը** մեծ շոյլություն է համարում: Հիշեցնենք, որ դեռ հունիսին նախկինում բաց թողնվող 170 խմ-ի փոխարեն արդեն իսկ այդ չափաքանակը սահմանվել էր 240 խմ: Թե ինչո՞վ է պայմանավորված արդեն ոռոգման սեզոնի ավարտին այդպիսի շոայլ բացթողումը, շատերին է զարմացնում, դրա պատասխանները Կ. Դանիելյանը, հանդիպելով Աժ խմբակցությունների հետ, դեռ չէր սացել:

Այս հարցի վերաբերյալ թեժ քննարկումներն՝ այսօր:

Մ. Խ.

«ԱԶԳ» ՕՐԱԳԵՐԳ
Հրատարակության մեջ է արդեն

Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԳԵՐԳ» ՍՊԸ
Երեւան 375010 Հանրապետության 47
Ֆաքս՝ 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
www.azg.am

Գլխավոր խմբագիր
ՅԱՀՈՒ ԱԶԵՏԻՔՅԱՆ / հեռ. 521635

Խմբագիր
ՊԱՐՈՒՅՐ ՅԱՀՈՒԲՅԱՆ / հեռ. 529221

Հասցեագրային (գրվազդ) / հեռ. 582960

Լուսագրների սենյակ / հեռ. 581841

Հանձնարար. ծառայություն / հեռ. 582483

Շուրջօրյա լրահոսով ծառայություն
/ հեռ. 529353

Հանձնարարչային շարասենյակ
«Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տրպագիր մամուլի միջոցով կամ ռադիոհեռուստատեսութեամբ առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգիլւում են համաձայն ՀՅ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի

Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում

Գ տարով յօդուածները գրվազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

«Հայաստանի մանուկներ» հիմնադրամը (COAF) 5 տարեկան է

«Ամեն երեխաները տաղանդավոր են, բայց հնարավորություն պետք է ունենան իրենց շնորհները բացահայտելու եւ օգտագործելու համար: Մեր գործն է այդ հնարավորությունը նրանց տրամադրել, ասում է Կարո Արմենը, որ «Հայաստանի մանուկներ» հիմնադրամի (COAF) հիմնադիրն է եւ խորհրդի ատենապետը, «Անտիգենիֆ» ընկերության նախագահը: Իր համոզմունքը սփյուռքահայ բարեգործ առաջնորդում է օլիմպիական խաղերում մեր ունեցած բրոնզե մեդալների թվով եւ մեր երկրի բնակչության թիվը նմանատիպ մեդալներ վաստակած օտար երկրների հետ բաղդատելով:

Նաեւ կնոջասեռ, որ գյուղերը կարող ունենան միմյանց հետ: Վեց գյուղում մեջ 16-17000 հոգի եւ մոտ 3000 մանուկներ կան: Վերանորոգած են հինգ դպրոց, երեք մանկապարտեզ, մեկ մշակութային կենտրոն, երկուսդն էլ գալ ամառ պատրաստ կլինի, երեք բժշկական ամբուլատոր ծառայություն, սպորտային համալիր ալ շինեցինք, որոգման ջուր ենք ապահովել 3 գյուղի համար: Անկե զատ մարդկանց կսովորեցնենք տնտեսական, հողագործական ծրագրեր»:

Կարո Արմենը մեծ նշանակություն է տալիս հայ գյուղացուն: «Միայն երեւանի միջոցով երկիր չըլլար: 900 գյուղ կա Հայաստանում: Բոլոր գյուղերի վիճակը նույնը չէ, բայց նման է: Մինչդեռ մեր ազգի արմատը, ուժը գյուղերու մեջն է, այնտեղ ապրող երեխաներու մեջ: Ընդ որում, ամեն վայրկյանը թանկ է», ասում է նա: Հիմնադրամի աշխատանքի խոսքերը որոնես լոզունգ են օգտագործված կազմակերպության ծրագրերը ներկայացնող գրքույկում, որ ընթերցողին հորդորում է «փրկելով սերունդը պահպանել ազգը»:

Կարո Արմենի հավաստմամբ, Արմավիրի մարզում COAF-ի վերակառուցած դպրոցներն այնքան հարմարավետ են ու հրապուրիչ, որ պարզապես ափսոս է դրանք միայն օրվա առաջին կեսին օգտագործելն ու տարվա 9 ամիսներին շահագործելը: Օրվա բոլոր ժամերին եւ տարվա բոլոր եղանակներին դպրոցը երեխաներին ծառայեցնելու համար «Հայաստանի մանուկներ» հիմնադրամը տարբեր արտադպրոցական խմբակներ ու ծրագիր է իրականացնում դպրոցականների համար, իսկ այս տարի նաեւ ամառային ճամբար են կազմակերպել, որի փակումը նախատեսված է առաջիկա կիրակի օրը: Երեխաներն այլ վերաբերմունք ունեն դպրոցի նկատմամբ: «Առաջվա հին ու կեղտոտ դպրոցը չէ այլեւս, երեխաները հաճույով են մնում այնտեղ», վստահեցնում է Կարո Արմենը: Նա ուրախությամբ է պատմում դալարիկցի մի պստիկի առաջարկի մասին, թե եկեք այս լավ ծրագիրը շարունակելու համար ակումբ ձեւավորենք: Հիմնադրամի ներդրումն է նաեւ Արմավիրի մարզի վեց գյուղերի միջհամայնքային ամբարները՝ «Շրջադարձը», որի հեղինակների թվում երեխաները մեծամասնական թիվ են կազմում:

Ժամանակին Կարո Արմենը Քարակերտում տարվող տարբեր միջազգային կազմակերպությունների աշխատանքները կանոնակարգելու եւ փոխհամաձայնեցնելու կոչ է արել դրանց ղեկավարներին: Առաջարկը ոչ միայն ողջունվել, այլեւ աղյուսավորվել է մի ֆանի համաստեղ ծրագրով, որոնք ֆինանսավորել են Համաշխարհային բանկը, ՄԱԿ-ը:

Ուշագրավ է, որ կազմավորման շրջանում «Հայաստանի մանուկներ» հիմնադրամի (COAF) ֆինանսավորման գործում ակտիվիստներ են եղել օտարազգի ամերիկացիները, որոնք այս օրերին Հայաստան են այցելել իրենց ֆինանսական ա-

նում: Բոլոր գյուղերի վիճակը նույնը չէ, բայց նման է: Մինչդեռ մեր ազգի արմատը, ուժը գյուղերու մեջն է, այնտեղ ապրող երեխաներու մեջ: Ընդ որում, ամեն վայրկյանը թանկ է», ասում է նա: Հիմնադրամի ատենապետի խոսքերը որոնես լոզունգ են օգտագործված կազմակերպության ծրագրերը ներկայացնող գրքույկում, որ ընթերցողին հորդորում է «փրկելով սերունդը պահպանել ազգը»:

Կարո Արմենի հավաստմամբ, Արմավիրի մարզում COAF-ի վերակառուցած դպրոցներն այնքան հարմարավետ են ու հրապուրիչ, որ պարզապես ափսոս է դրանք միայն օրվա առաջին կեսին օգտագործելն ու տարվա 9 ամիսներին շահագործելը: Օրվա բոլոր ժամերին եւ տարվա բոլոր եղանակներին դպրոցը երեխաներին ծառայեցնելու համար «Հայաստանի մանուկներ» հիմնադրամը տարբեր արտադպրոցական խմբակներ ու ծրագիր է իրականացնում դպրոցականների համար, իսկ այս տարի նաեւ ամառային ճամբար են կազմակերպել, որի փակումը նախատեսված է առաջիկա կիրակի օրը: Երեխաներն այլ վերաբերմունք ունեն դպրոցի նկատմամբ: «Առաջվա հին ու կեղտոտ դպրոցը չէ այլեւս, երեխաները հաճույով են մնում այնտեղ», վստահեցնում է Կարո Արմենը: Նա ուրախությամբ է պատմում դալարիկցի մի պստիկի առաջարկի մասին, թե եկեք այս լավ ծրագիրը շարունակելու համար ակումբ ձեւավորենք: Հիմնադրամի ներդրումն է նաեւ Արմավիրի մարզի վեց գյուղերի միջհամայնքային ամբարները՝ «Շրջադարձը», որի հեղինակների թվում երեխաները մեծամասնական թիվ են կազմում:

ջակցության արդյունավետությամբ հիանալ-փառավորվելու համար: Ի վերջո, հիմնադրամի կայացման առաջին ճակատագրի երեկոյի ընթացքում նրանք Հայաստանում բարեգործական ծրագիր իրականացնելու համար հավաքել էին 1 միլիոն 400 հազար դոլար, որից միայն 200 000 դոլարն էր տրամադրել հիմնադիր Կարո Արմենը:

Բացի համայնքային ծրագրերի իրականացումից Կարո Արմենը նաեւ առողջապահության ոլորտում է լուրջ ներդրումներ անում: Նա ղեկավարած «Անտիգենիֆ» ընկերությունը (նստավայրը՝ Նյու Յորք), հայտնաբերել է երիկամի քաղցկեղը ճնշող պատվաստանյութ՝ «Օնկոֆագ», որը քաղցկեղի սկզբնական փուլում հավակնում է կանխել դրա զարգացումը՝ փրկելով մարդու կյանքը: Պատվաստանյութի արդյունավետությունն արդեն 700-ից ավելի մարդու վրա է գնահատվել: Այն արտոնագիր է ստացել Մոսկվայում, նախատեսվում է հոկտեմբեր ամսին եվրոպական երկրներում եւս հաստատել: Իմունային համակարգի հզորացմամբ քաղցկեղի դեմ պայքարող պատվաստանյութը Կարո Արմենի ջանքերով նաեւ Հայաստանում եւ անգամ տարածաշրջանում պետք է օգնի հաղթահարել մահաբեր հիվանդությունը, իհարկե, ՀՀ առողջապահության նախարարության արտոնագրի տրամադրումից հետո:

Մինչ այդ «Հայաստանի մանուկներ» հիմնադրամը առաջիկա շաբաթ օր՝ օգոստոսի 23-ին, պատրաստվում է տոնական միջոցառմամբ ամփոփել իր գործունեության հնգամյակը՝ հայ հասարակությանը իրական հայրենասիրության օրինակ ծառայելով:

ՍՈՒՐԵՆ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ԿՈՐՈՒՍՏԵՐ

Յուրի Բարսեղով, Վարդգես Բալյան, Սուրեն Աբրահամյան, հայր Օշական Մինասյան

Մեր թերթի արձակուրդի օրերին պատահած մի շարք իրադարձությունների կողին արձանագրվեցին նաեւ ցավալի կորուստներ՝ կյանքից հեռացան հայության կյանքում հետք թողած, վաստակ ունեցող մի ֆանի դեմքեր, որոնց գործունեությունը դեռ հանգամանորեն առիթ կունենանք անդրադառնալու: Մինչ այդ նրանցից առանձնացնենք չորս հոգու՝ Յուրի Բարսեղով, Վարդգես Բալյան, Սուրեն Աբրահամյան եւ հայր Օշական Մինասյան:

Ժամանակագրական կարգով առաջինը այս աշխարհին հրաժեշտ տվեց Ուոթերթաունի (Բոստոն, ԱՄՆ) հայ եկեղեցու հոգեւոր հովիվ Օշական Ծայրագույն վարդապետ Մինասյանը, որ իր հոգին ոչ միայն հոգեւոր, այլեւ հոգեկան ծառայություններ էր մատուցում մի ֆանի տասնամյակ հանդիսանալով տեղի «Երեւան» երգչախմբի անփոփոխ խմբավարը: Հայր սուրբը, անդամալույծ վիճակում, աթոռին նստած ղեկավարում էր երգչախումբը եւ հաղորդներ տալիս:

Հաջորդ ցավալի լուրն ստացվեց Մոսկվայից, որտեղ իր մահկանացուն կնքեց Յուրի Բարսեղովը՝ հայ իրականության մեջ միջազգային իրավունքի բացառիկ հեղինակություններից մեկը, որը հատկապես վերջին 20 տարիներին իսկայական աշխատանք էր տարել, մասնավորապես Համաշխարհային հայկական կոնգրեսի շրջանակներում, Հայ դատի եւ Ղարաբաղյան հարցի միջազգային իրավունքի տեսակետից քննության եւ ներկայացման ուղղությամբ: Նա անհողդողդ ջատագովն էր Հայոց ցեղասպանության պատասխանատու Թուրքիայի դեմ միջազգային դատական գործ հարուցելու գաղափարին:

Մյուս գույժը հասավ Վաշինգտոնից, որտեղ իր մահկանացուն կնքեց հայտնի բարեւար, ազգային գործիչ Վարդգես Բալյանը, երկարատեւ հիվանդությունից հետո: Ռազմավար ազատական կուսակցության եւ մասնավորապես Թեհրանի մշակութային միության հայտնի գործիչը (նա 1997-2003 թթ.-ին եղել է ԹՄՄ կենտրոնական վարչության նախագահ) իր բազմաթիվ նվիրատվությունների ու մեկենասությունների շարքին հաստատել է իր եւ տիկնոջ՝ Ռիտա Բալյանի անունով հեղինակավոր մի մրցանակ, որը շնորհվում է ամեն տարի փոխնիփոխ հայերեն եւ օտարագիր հայ լրագրողների, հանդիսանալով մեր իրականության առաջին լրագրողական մրցանակը:

Դարձյալ Մ. Նահանգներում, այս անգամ Դետրոյթում, օգոստոսի 11-ին 101 տարեկանում վախճանվեց ամենատարեց վանեցին՝ Սուրեն Աբրահամյանը: Վանից մինչեւ Դետրոյթ, դժվարին տարիներ ու տասնամյակներ չարաբաստիկ ատաքանոով տուն-տեղ, մեծ ընտանիք, կառողություն ստեղծած անձնավորություն՝ որն իր անբասիր կյանքով, անգլերեն ու հայերեն հրատարակած գրքերով, կոնգրեսականներին հղած նամակներով, եկեղեցուն, մասնավորապես եւ իր պատկանած կուսակցությանը՝ ՌԱԿ-ին եւ ՀՌԱԿ-ին կատարած բազմաթիվ նվիրատվություններով ամենահարգված վերադարձողներից էր Մ. Նահանգներում:

Գաֆեսճյանի նոր քայլերը ընդդեմ Ամերիկայի Հայոց ցեղասպանության թանգարանի

«Ազգ» այս տարվա մայիսի 10-ի համարում «Հայոց ցեղասպանության թանգարանը ԱՄՆ-ում» ընդհանուր խորագրի եւ «Ցավոտ խնդիր հայերի, երանություն՝ թուրքերի համար» ենթավերնագրի ներքո թարգմանաբար ընթերցողներին ներկայացրեց «Արմինյե միրոր սփեքթեյթր» շաբաթաթերթի խմբագրականը, որտեղ առաջին անգամ հրապարակվում էին Վաշինգտոնում նախատեսված Հայոց ցեղասպանության թանգարանի վերաբերյալ մանրամասներ եւ պարզաբանվում կառուցումը ձգձգելու պատճառներն ու հոգաբարձուների խորհրդում եղած տարաձայնությունները:

Այժմ, ստացված նոր տեղեկությունների համաձայն, պրն Ջերալդ Գաֆեսճյանը, տեսնելով, որ Ամերիկայի նախկին Ազգային բանկին (որի տարածքն այժմ թանգարանին է հատկացված) հարակից չորս հողամասերի վրա իր իրավունքները վերականգնելու դատական հայցերը ցանկալի արդյունք չեն տալիս, եւս մի հուսահաս քայլի է դիմել, այս անգամ դարձյալ մի անհիմն դատական հայց հարուցելով թանգարանի դեմ, պնդելով, որ թանգարանի պատասխանատուները, Ամերիկայի հայկական համագումարը եւ անձամբ Հայր Հովնանյանը իրեն անվանարկել են:

Սա, ըստ թանգարանի պատասխանատուներից ստացված տեղեկությունների, 2007-ի մայիսից սկսած նրա դատական մեղադրանքների շարունակությունն է, հավանաբար նոր կնքուած դատաստարանի ճախողման: Ծիծաղելին այն է, որ ներկայացված հայցի ամբողջական տեքստն անցյալ տարվա դեկտեմբերի 8-ի համարում տպագրել էր «Արմինյե ոիփորթը» թերթը, որի սեփականատերն է ինքը՝ Գաֆեսճյանը, եւ այս անցած ժամանակահատվածում ոչ մի քայլ չէր ձեռնարկվել այդ առումով: Ինչո՞ւ:

«Նոր պնդումները պարզապես ծխավարագույր են կոծկելու Գաֆեսճյանի անձնական օրինախախտումները», պատասխանում է թանգարանի իրավական հարցերով զբաղվող փաստաբան Առնոլդ Ռոզենֆելդը: «Նա պնդում է, որ այս բոլոր հարցադրումները վնասում են իր հեղինակությանը, բայց այդ ե՞րբ է ճշմարտությունն համարվել արատավոր, անարգական»:

Իսկ ճշմարտությունն այն է, որ «թանգարանի վերակառուցման ծրագիրը իրականացնել չկարողանալու պատճառով 2006-ին հրաժարական տալուց հետո, Գաֆեսճյանը փորձում է խոչընդոտել թանգարանի հետագա աշխատանքներին անհիմն դատական նորանոր հայցերով», եզրակացնում է Ռոզենֆելդը:

Հ. Ծ.

ՕՐԱԿԱՐԳ

Այսօր

◆11.30-Ազգակ ակումբի հյուրն է Գողոնների միության նախագահ Լեւոն Անանյանը:

◆12.00-Փաստաբանների պալատում (մ. Երեւան, Զաքիյան 3) տեղի կունենա ՀՀ Փաստաբանների պալատի նախագահ Ռուբեն Սահակյանի մամուլի ասուլիսը: Թեմա՝ 2008 թ. օգոստոսի 23-ին անցկացվելիք փաստաբանների որակավորման քննությունները:

◆13.00-«Ուրբաթ» ակումբում «Հայաստանի մանուկներ» հիմնադրամի ներկայացուցիչները կներկայացնեն կատարված աշխատանքները եւ կխոսեն հետագա ծրագրերի մասին:

◆15.00-Ազգային պատկերասրահում կբացվի ֆրանսահայ գեղանկարիչ եւ ճարտարապետ Միրայր Խաչիկյանի անհատական ցուցահանդեսը:

Ռուսաստանը պետք է շտապեր լինի Սաակաշվիլուն, նա բացել է Պանդորայի արկղը

Այն, ինչ տեղի ունեցավ Հարավային Օսիայում, պետք է հայ հաղարական մտքի վերլուծության լուրջ թեմա դառնար, սակայն քանի որ հաղարական միտք ասածը, որպես այդպիսին, մեր իրականության մեջ բացակայում է, փորձենք իմանալ, վերջ ի վերջո ինչո՞ւ սկսվեց այս պատերազմը եւ ի՞նչ հետեւանքներ կարող է ունենալ մեր տարածաշրջանի համար:

Պատմություն

Անկեղծանամ. նախագահների հավլով մեր բարեկամ վրացի ժողովրդի բախտը չի բերում: Օսական խնդիրը սեղծեց եւ առաջին ռազմական գործողությունները սկսեց Վրաստանի առաջին նախագահ Զվիադ Գամսախուրդիան: Վերջինս գտնում էր, որ օսերը ոչ թեղաբնակ, այլ ելկոր ժողովուրդներ են, հետեւաբար իրավունք չունեն ինքնավարություն ունենալու իր երկրի՝ Վրաստանի կազմում: Այս «հանճարեղ» մտքից հետո Վրաստանի խորհրդարանը ընդունեց էլ ավելի հանճարեղ որոշում՝ լուծարեց Հարավային Օսիայի ինքնավարությունը եւ զորքեր մտցրեց այնտեղ, սկսվեց պատերազմ, ինչի հետեւանքով Վրաստանի տարածում ապրող օսերը, մոտ 30 հազար մարդ, սթրմված էին լքել իրենց տները, ըստ որոշ տվյալների՝ մոտ 5 հազար օսեր սպանվել էին Գամսախուրդիայի ավելի կոշտ դիրքորոշում որդեգրել այդ երկրում առկա հակամարտությունների նկատմամբ:

ԽՍՀՄ-ի քայքայումից հետո Ռուսաստանը՝ շարունակաբար ազդեցության տարածքներ էր կորցնում Արեւելյան Եվրոպայում, Մերձավոր Արեւելքում, Լատինական Ամերիկայում, Բալկաններում եւ այլուր: Սակայն Մոսկվայում լավ էին հասկանում, որ ԱՊՀ տարածքը այն միակն է, որի վերջումը կարող է ճակատագրական լինել Ռուսաստանի Դաշնության համար: Իսկ ԱՄՆ-ը ակտիվորեն ներքաշվում էր Ռուսաստանի հետ պայքարի հենց ԱՊՀ տարածքում, փորձելով այստեղ սեղծել քաղաքական ազդեցության իր գոտիներն ընդդեմ Ռուսաստանի: Իսկ վերջինս էլ չունենալով տնտեսական, ռազմական, հետեւաբար քաղաքական մեծ ռեսուրս, ստիպված էր անընդհատ նահանջել՝ զիջելով մի տարածք մյուսի հետեւից:

Ռուսաստանի վերականգնմանը, որպես գերտերության, ձեռնածուն եղավ Վլադիմիր Պուտինը, սակայն կենտրոնացած ներքաղաքական զարգացումների եւ տնտեսության վերականգնման հետ, ռուսական նահանջը շարունակվում էր նաեւ նրա օրոք: Ռուսները Արեւմուտի «հոտմանը» հանձնեցին Սերբիան, թույլ տվեցին ՆԱՏՕ-ի ընդլայնումը մինչեւ իրենց սահմաններ, ամերիկյան ռազմաբազաների տեղակայումը Կենտրոնական Ասիայում եւ վերջապես հանեցին ռազմաբազաները Վրաստանի տարածքից՝ Ախալքալաքից եւ Բաթումից:

«Գերտերությունը չի կարող հավերժ նահանջել, մի օր կանգ է առնում», Հենրի Քիսինջերի այս խոսքերը ուղղված էին Մեծ Բրիտանիային, երբ վերջինս Ֆոլկլենդյան փոքրիկ կղզիների համար պատերազմ սկսեց Արգենտինայի դեմ: Թվում էր, թե բրիտանացիներին պետք չէին հեռավոր Արգենտինայի կողմից գտնվող անմարդաբնակ եւ անպտուղ այդ կղզիները: Սակայն հարցը այստեղ գերտերության կարգավիճակը եւ երկրի հեղինակությունը վերականգնելու հարցն էր: Մեծ Բրիտանիան, որը 2-րդ աշխարհամարտից հետո կորցրել էր իր ազդեցությունը եւ տերության կարգավիճակը, Մարգարեթ Թեչերի ղեկավարությամբ վերականգնեց դրանք, հետ նվաճելով Ֆոլկլենդյան կղզիները: Նմանատիպ Ֆոլկլենդյան կղզիներ Ռուսաստանի համար Հարավային Օսիան է. թույլ տալ նրա նվաճումը Վրաստանի կողմից, նշանակում է վերջնականապես կորցնել գերտերության կարգավիճակը վերականգնելու վերջին հնարավորությունը: Այսինքն, 2008-ի օգոստոսի 8-ին Վրաստանի նախագահը պատերազմ սկսելով փոքրիկ Ցխինվալ քաղաքում, հնարավորություն տվեց Մոսկվային ապացուցելու որոշ աշխարհին, որ ռուսական վիրավոր արջը ապաքինվել եւ այլեւս մահիր չէ նահանջել: Ավելի ճիշտ, ուղղակի նահանջելու տեղ այլեւս չունի, ինչպես ասում են, «հետեւում Մոսկվան է»: Այսինքն՝ դեմքերի զարգացման սերբական սցենարը չկրկնվեց, ռուսական զորքերը մտան Հարավային Օսիա: Համոզված եմ, որ դեմքերի նման զարգացմանը Ռուսաստանը պատրաստ էր, պարզապես նման արկածախնդրություն, այսինքն՝ ներխուժում Ցխինվալ, պատճառական Թբիլիսիի կողմից բավականին հաշվարկելի քայլ էր, ինչի համար էլ Վրաստանը տարիներ շարունակ զինում էր իր բանակը եւ ամենայն հավանականությամբ հենց դրանով էլ բացատրվում է Թբիլիսիում, Լյուբլի կամ Մոսկվայում, կամ Վաշինգտոնում, կամ Բրյուսելում: Եվրամիության որոշ անդամների չեզոք դիրքորոշումը եւ փորձը միջնորդի դեր ստանձնելու հուշում են, որ այս պայքարում նոսքի ցանկանում են հնարավորինս չեզոք լինել եւ չեն պատրաստվում կողմերից ոչ մեկին: Նկատենք, որ այս պահվածքը այն չէ, ինչը սպասում էր եվրոպական արժեքներ «տարածող» Սաակաշվիլին: Վերջինս նաեւ հիասթափված է ԱՄՆ-ի դիրքորոշումից, որը զորքեր չուղարկեց վրացական երիտասարդ ժողովրդավարությունը պաշտպանելու համար: Այսինքն՝ սպասել, թե ամերիկյան ռեյնջերները կգան կռվելու ռուսական դեսանտայինների դեմ, հիմարություն է ու ընդամենը ցույց է տալիս վրացական իշխանությունների ռազմավարական մտածելակերպի լիակատար բացակայությունը:

Պարզ է մի բան, վրաց-օսական այս 5-օրյա պատերազմը, որն իսկական ողբերգություն դարձավ թե՛ օսերի եւ թե՛ վրացիների համար, նոր դիվանագիտական բախումների ու լարվածության պատճառ կդառնա, որից կարող են օգտվել բոլորը, բացի հասարակ մարդկանցից, որոնք իրենց կյանքով վճարեցին որոշ քաղաքական գործիչների արկածախնդրության համար:

Հետագա զարգացում

Այս պատերազմում տուժողը վրացական կողմն է, անկախ դիվանագիտական պատերազմի հետագա ընթացքից եւ նույնիսկ որոշակի հնարավոր հաջողություններից: Եթե մինչեւ պատերազմը Թբիլիսին վերահսկում էր Հարավային Օսիայի տարածքի մի զգալի հատվածը, որտեղ տասնյակ վրացական գյուղերում ապրում էին մոտ 12 հազար վրացի խաղաղ բնակիչներ, արդա այս գյուղերի ոչնչացումից հետո վրացիների վերադարձը ֆիզ հավանական է, պարզ է, որ ոչ Օսիայի ներկա ղեկավարությունը եւ ոչ էլ Ռուսաստանը դա թույլ չեն տա, այս մասին արդեն հայտարարել է նաեւ Հարավային Օսիայի նախագահ Կոկոյտին: Օսերը թույլ չեն տա նաեւ վրացական խաղաղապահների վերադարձը իրենց տարածք, քանի որ հենց նոսքի էին առաջինը կրակ բացել ռուս խաղաղապահների վրա եւ փաստորեն պատերազմ սկսել Ցխինվալում: Վրաստանը ամբողջովին կորցրել է վերահսկողությունը Հարավային Օսիայի նկատմամբ, հիշենք, որ սեղծված իրավիճակից օգտվեց Աբխազիան եւ վրացական զորքերին խուճապային փախուստի մատնեց Կոդորի կիրճից, վերջիններս նահանջելիս մոռացել էին նույնիսկ իրենց երկրի դրոշը տանել:

Պատերազմական գործողություններին հետեւեց նաեւ տեղեկատվական պատերազմը, որտեղ ամեն մեկը հաղթանակ է տանում իր դաշտում, ռուսական լրատվամիջոցներում իշխում են միմիայն ռուսամետ տեսակետները, իսկ ամերիկյանում՝ վրացական: Եվրոպական լրատվամիջոցները, բացառությամբ բրիտանական, որոշակի չեզոքություն են պահպանում եւ առաջին օրերի վրացամետ դիրքորոշումներին հաջորդեցին նաեւ Սաակաշվիլու եւ ամերիկացիների գործողությունները քննադատող նյութեր: Այս պատերազմը պարզ դարձրեց նաեւ մեկ այլ իրողություն՝ եվրոպայում գոյություն ունեցող հակառուսական ճակատը, որի մեջ մտնում են Էստոնիան, Լիտվան, Լատվիան, Լեհաստանը, Ուկրաինան եւ Վրաստանը: Եվրոպական այլ երկրներ նախընտրում են զսպված դիրքորոշում ունենալ: Թուրքիան, ինչպես միշտ, միայն իրեն հատուկ դիվանագիտական նոտք խաղ դրսեւորեց, փաստորեն չկանգնելով վրացամետ դիրքորոշում ունեցողների կողքին, մի բան, որը Վրաստանի իշխանությունների խոր զարմանքը հարուցեց, քանի որ Անկարան Թբիլիսիին ակտիվ կերպով զինող երկրներից էր, իսկ թուրքական զինվորական մասնագետներն օր ու գիշեր օգնում էին այդ երկրին մարտունակ բանակ սեղծելու, որը սակայն փախավ ռուսական զորքի հայտնվելուց անմիջապես հետո: Ի դեպ, դեռ Սաակաշվիլի ժամանակ ընդունված Վրաստանի ազգային անվտանգության դոկտրինի համաձայն, Թուրքիան այդ երկրի ռազմավարական դաշնակիցն է: Հիշեցնենք նաեւ, որ Հայաստանը, նույն այդ դոկտրինի համաձայն, Վրաստանի ռազմավարական դաշնակիցների ցանկում բացակայում է:

Հարավային Կովկասի բալկանացում

Սեղծված իրավիճակը վտանգավոր է ոչ միայն հակամարտող երկրների, այլեւ որոշ տարածաշրջանի համար: Հարավային Կովկասը միշտ էլ անհանգիստ շրջան է եղել, եւ տերությունների պայքարը խաղաթղթային այս տարածքի համար միշտ հանգեցրել է տարածաշրջանի ժողովուրդների միջեւ պատերազմների ու մարդկային մեծ կորուստների: Այսինքն՝ խաղաթղթային ռազմավարական նշանակությունը Հարավային Կովկասի եւ առավելությունն է, եւ դժբախտությունը: Փաստորեն կարող ենք կանխագուշակել, որ հարավսլավական նոր պատերազմից հետո մեր տարածաշրջանում ակնառես կլինենք ռուս-ամերիկյան պայքարի մի նոր շրջանի, քանի որ պարզ է, այստեղ սկսվում է աշխարհաքաղաքական վերափոխումների մի նոր ժամանակաշրջան: Ռուսաստանը ցանկանում է վերականգնել իր ազդեցությունը, իսկ ԱՄՆ-ը ամեն ինչ կանի թույլ չտալու համար: Ռուսաստանը հավակնում է աշխարհաքաղաքական պայքարում նոր կարգավիճակի եւ այս պայքարում գործի մեջ կդնվեն բոլոր հնարավորությունները, տուժողները կլինեն փոքր պետությունները եւ ազգերը: Հարավային Կովկասի հնարավոր բալկանացումը շատ վտանգավոր է, եւ Հայաստանը այստեղ կարող է լուրջ գործունեություն սկսել, ունենալով հավասարապես լավ հարաբերություններ թե՛ Վրաստանի եւ թե՛ Ռուսաստանի հետ:

Այս պայքարում Մոսկվան կկրի էլ ավելի կարեւորել տարածաշրջանի մի հիմնական դաշնակցին՝ Հայաստանին, իսկ ԱՄՆ-ը ամեն ինչ կանի շահելու համար Երեւանի աջակցությունը մեր տարածաշրջանում իր դիրքերի ամրապնդման եւ Մոսկվայի հեռագա ուժեղացումը թույլ չտալու համար: Միանգամից ասեմ, որ իրավիճակը միանշանակ ձեռնտու չէ մեզ համար, քանի որ կարող է հանգեցնել ներքաղաքական իրավիճակի սրմանը, եւ Հայաստանում կառաջանան ռուսամետ եւ ամերիկամետ ուժեր, որոնց միջեւ ընթացող պայքարը կարող է ձեռնտու լինել տերություններին, բայց ոչ երբեմն Հայաստանին:

Ինչպես, Հարավային Կովկասում սկսում է զարգացումների մի նոր փուլ, իսկ Ռուսաստանը իսկապես պետք է շտապեր լինի Սաակաշվիլուն, որպեսզի վերջինիս «օգնությամբ» կարողացավ ի լուր աշխարհի հասատել, որ 2008-ի Ռուսաստանը նոր քաղաքական գործոն է համաշխարհային քաղաքական քաղաքաբեմում, որի հետ պետք է հաշվի նստել անկախ ամեն ինչից:

ԱՐՄԵՆ ՍՏԵՓԱՆՅԱՆ

Ընտ Ռեւազ Գաշեշիլաձեի, Ռուսաստանը ձգտում է ոչ թե ուղղակի խլել...

Ի-ին էջից

Մասնավորապես Ռուսաստանի զորքերի կողմից օկուպացվել էին Զուգդիդի, Փոթի, Սենակի խաղաքները, որոնք, ի դեմ, մոտ չեն Հարավային Օսիային, օկուպացված էր Գորին, բացի այդ, ռուսական զրահամեքենաները երկուաբթի գտնվում էին Խաշուրիում, ռուսական զրահամեքենաները հայտնվել էին նաեւ Թբիլիսիից 40 կմ հեռու: Այնտեղ, որտեղ օկուպացիան էր տեղի ունենում, թալանված են ու ավերված վրացական ռազմական ենթակառուցվածքները, նաեւ խաղաղապահական նշանակության ռադարները, հեռախոսային կայանները: Վրացական ռազմական բազաներից Փոթիում խորտակել էին 4 փոքրիկ ռազմանավերը, Փոթիի նավահանգստից գողացվել են նաեւ գեներատորներն ու առափնյա պարեկային ծառայության 30 ռազմական նավակներ, որ, տեղեկությունների համաձայն, տարվել են Աբխազիա: Այդ գործողությունների ընթացքում ռուսական զորքերը զավթել էին նաեւ Կոզորի կիրճը, առանց բախումների, ինչի որ վրացական կողմը հրաժարվեց կրակել՝ խաղաղ բնակչությանը չվնասելու համար: Տհաճ է նշել, բայց բնակչության մեջ նոր տեսակի ոգեշնչում է ի հայտ եկել՝ ռուսական օկուպացիաներ, զավթիչներ եւ այլն:

Գիտեմ նաեւ, որ ներկա դրությամբ Վրաստանի կենտրոնում՝ Բորժոմ-Բակուրիանի ազգային պարկի անտառներում հրդեհ է, որը, մեր տվյալներով, սկսվել է, երբ այդ անտառների վրայով անցել են ռուսական ուղղաթիռները: Իրավիճակը ծանր է, դա ուրիշ տարածի անօրինական զավթում է, որ ուղեկցվել է թալանով, կան տեսագրություններ, թե ինչպես են ռուս զինվորները իրենց հետ վերցնում հեռուստացույցներ, հին հագուստ, անգամ ատամի խոզանակներ վրացական ռազմաբազաներից...

- Ինչ տվյալներ կան փախստականների առնչությամբ:

- Մեծ է փախստականների թիվը, կառնիր խայի տվյալներով, ավելի քան 120 հզ., որ երեխ անգամ ավելին է, քան Հարավային Օսիայի բնակչությունը: Հիմնականում վրացի փախստականներ են: Ընդ որում, այդ առնչությամբ «Կոմերսանտին» տված հարցազրույցում էդուարդ Կոկոյտին հայտարարել է, թե վրացական գյուղերում ամեն ինչ հավաստեցվել է հողին ու ընդհանրապես «ամեն ինչ մաքրվել է»: Ավելին, Կոկոյտին հայտարարել է, թե մտադրություն չկա փախստականներին վերադարձի. հնարավորություն տալու: Սա էթնիկ զտում է, ընդ որում, այդ ամենը ոչ թե տարեային է եղել, այլ ծրագրած:

- Այս դեպքում ինչի՞ է ձգտում Ռուսաստանը:

- Ռուսաստանը ձգտում է ոչ թե ուղղակի խլել մեզանից Աբխազիան եւ Հարավային Օսիան, այլ ուզում է ունենալ լսող կառավարություն, որ փոխվի երկրի քաղաքական կուրսը, որ մենք դադարենք մտածել ՆԱՏՕ եւ Եվրամիություն մտնելու մասին: ՆԱՏՕ-ն մեզ համար ինքնանպատակ չէ, այլ միջոց՝ հենց նմանօրինակ իրավիճակում պատասխանության համար: Եթե Ռուսաստանի ղեկավարությունը այլ քաղաքականություն վարեր, ավելի չեզոք, հնարավոր դարձներ խաղաղ ճանապարհով տարածքային ամբողջականության վերականգնումը, որ հիմա բավականին բարդ է, բայց այն ժամանակ հնարավոր էր, այդ դեպքում երկրի քաղաքական կուրսը ուրիշ կլիներ: Բայց վրացական կողմի կոշտությունը ի հայտ չի եկել հենց խոսանում են աջակցել վերջերս Վրաստան այցելած տարբեր երկրների նախագահներն ու պատասխան անձինք: Օգնություն է տրվել ու տրվում նաեւ մարդասիրական ուղղությամբ, նաեւ նշեմ, որ Հայաստանն է տրամադրել իր օգնությունը եւ ես շնորհակալ եմ հայ բարեկամներին՝ ցույց տված աջակցության համար, հատկապես որ շատերը ծանր պահերին եկան Հայաստան եւ ջերմ հյուրընկալության արժանացան: Շնորհակալություն նաեւ Հայաստանի ղեկավարությանը՝ այս հարցում հավասարակշիռ քաղաքականություն դրսեւորելու համար: Դրա հետ մեկտեղ, որոշ լրատվամիջոցներ հրապարակում են հակավրացական բնույթի հրապարակումներ, եւ դրանց տարածումը Վրաստանում հաստատ հիացմունք չի առաջացնի:

- Որքանո՞վ են հիմա անվտանգ Վրաստանում ճանապարհները:

- Ռմբակոծությունների ժամանակ վնասել են երկաթգիծը, անվտանգ չէ Թբիլիսիով անցնող ճանապարհը, որ անցնում է նաեւ Գորիով: Հայ տուրիստների նախընտրած վայրում՝ Աջարիայում էլ ռմբակոծություններ հիմնական հանգստավայրերում չեն եղել, միայն թուրքական սահմանի հարեւանությամբ խեղաչառուի ռազմաբազան է ռմբակոծվել: Ինչ վերաբերում է Ցավախեթիին, առայժմ այնտեղ ոչ մի խնդիր չի եղել, այնտեղ անգամ համընդհանուր զորահավաքի ժամանակ որեւէ մեկը չի տարվել:

Իրականությունն այն է, որ սա էթնիկական հակամարտություն չէ, այլ վրաց-ռուսականի, ինչի մասին հայտարարում են նաեւ ռուս մասնագետներ, ավելացնելով, որ տեղի ունեցածը Ռուսաստանի կողմից ագրեսիա էր Վրաստանի նկատմամբ:

- Կան արդյոք որոշակի տեղեկություններ, թե որքան մարդ է ռազմական գործողությունների առաջին օրերին եկել Հայաստան:

- Երբ Թբիլիսիի օդանավակայանից միջազգային ավիաընկերությունները թռիչքներ չէին իրականացնում, մարդկանց զգալի մասը մեկնեց Երեւանից, քանի որ ավելի մոտ էր, մի որոշ մասն էլ՝ Բաքվից: Բայց ներկայումս թռիչքները վերականգնված են, ուստի այդ հոսքը դադարել է: Որոշ մարդիկ էլ, իմ տեսածով հենց սահմանին, մեծ հոսքով գալիս էին բարեկամների ու հարազատների մոտ, բայց դա մեծաթիվ չէր: Իրավիճակն այնպիսին էր, որ հենց Թբիլիսիի մերձակայքում ռումբեր էին ընկնում, ռազմական օբյեկտների վրա, բայց ամեն դեպքում հաղթի մերձակայքում, ու մարդիկ մտածում էին անվտանգության մասին, չնայած երկրում որեւէ խուճապ չկար, կարգուկանոնը պահպանվում էր եւ պահպանվում է:

Վենեսուելան ազգայնացրեց ցեմենտի արդյունաբերությունը

Օգոստոսի 19-ից Վենեսուելայի կառավարությունն իր վերահսկողության տակ է առել ցեմենտ արտադրող մեխիկական «Ցեմեքս» խոշոր ընկերության բոլոր բաժնմասնաբաժինները: Ֆրանսպրեսը նշում է, որ այդ քայլը ձեռնարկվել է ընկերության բաժնետոմսերի վերահսկիչ ծառը կառավարությանը վաճառելու բանակցությունների ձախողումից հետո:

Վենեսուելայի նախագահ Ուգո Չավեսը «Ցեմեքսի» ազգայնացումն անվանել է «քայլ դեպի սոցիալիզմ»: Այդ ընկերությունն արտահանվում է երկրի ցեմենտի տուկայի 50 տոկոսը:

Երկրի փոխնախագահը լրագրողներին ասել է, որ «Ցեմեքսը» իր բաժնետոմսերի դիմաց պահանջել էր 1,2 մլրդ դոլար, որն «անհամեմատ բարձր է իրական գնից: Ցեմենտի տուկայի մնացյալ մասը տնօրինող ֆրանսիական «Լաֆարժ» եւ շվեյցարական «Հոլցիմ» հետ կառավարության բանակցությունները հաջող են անցել: Պետությունը դրանց բաժնետոմսերի մեծ մասը ձեռք է բերել համապատասխանաբար 267 մլն եւ 552 մլն դոլարով:

Նախագահ Չավեսի խոսքերով, ցեմենտի արդյունաբերության վերահսկումը պետությանը թույլ կտա աշխատողներին ապահովել բնակարաններով: 2004 թվականից Վենեսուելայում տարեկան կառուցվում է 40-50 հազար բնակարան: Անհրաժեշտ է կառուցել եւս 100 հազար բնակարան:

1998-ից պատասխանավատ նախագահ Ուգո Չավեսը ձախսեցե մի շարք բարեփոխումներ է անցկացրել: Արդյունաբերության գլխավոր ճյուղերն արդեն ազգայնացված են: Պետությունը ներկայումս վերահսկում է նավթարդյունաբերությունը, ոգոգաի, էլեկտրաէներգիայի արտադրությունը, հեռահաղորդակցությունները:

ՈՒԻՍ-ՎՐԱՍՏԱԿԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆ

Ռայսը զգուշացնում է Ռուսաստանին

ԱՄՆ պետքարտուղար Կոնդոլիզա Ռայսը զգուշացրել է Ռուսաստանին, ասելով, որ այդ երկիրը «վտանգավոր խաղ» է սկսել, եւ Արեւմուտքն նրան թույլ չի տա Կովկասի հակամարտության մեջ հասնել իր ռազմավարական նպատակներին:

Ռայսի խոսքերով, Հարավային Օսիայի հակամարտության պատճառով Ռուսաստանը ներխուժել է Վրաստան, ինչն «ուղղված է ժողովրդավարության դեմ, այդ երկրի կառավարության թուլացմանը եւ տարածաշրջանի բնակչության ահաբեկմանը»:

Ռայսն այս հայտարարությունն արել է Բրյուսելում երեկ բացված ՆԱՏՕ-ի արտակարգ նիստի նախօրեին: ՆԱՏՕ-ի նիստը վերաբերում է Վրաստանին եւ անցկացվում է ԱՄՆ-ի պատաստաձեռնությամբ, նշում է Ռոյթեր գործակալությունը:

ՆԱՏՕ-ի երկրները կփորձեն ՌԴ նախագահ Դմիտրի Մեդվեդեւին համոզել Վրաստանի տարածից դուրս բերելու ռուսական զորքը, կատարելով Ֆրանսիայի նախագահ Նիկոլա Սարկոզիի միջնորդությամբ կնքած վրաց-ռուսական հրադադարի համաձայնագրի պահանջները:

Ռայսը իր ելույթում արծարծել է նաեւ ընդհանուր միջազգային հարցեր: Նա խոսքերով, «մարդիկ կարող են իրենց աղահով զգալ ՆԱՏՕ-ի պատասխանության ներքո»: Նա միաժամանակ Ռուսաստանին հիշեցրել է, որ ներկայումս այդ երկիրը «շատ հեռու է աշխարհաքաղաքական կենտրոնի այն դերից, որ խաղում էր Խորհրդային Միությունը»:

«Ռուսական ռազմավարական օդուժը ոնգնգություն է կատարել նույնիսկ ԱՄՆ-ի սահմանների վրա, իսկ դա վտանգավոր խաղ է, որից ռուսները պետք է հրաժարվեն», ասել է Ռայսը:

Արեւմուտքը մտահոգ է. Իրանը կարող է արբանյակ արձակել

Արեւմուտքի երկրները մտահոգ են Իրանի միջուկային ծրագրի հնարավոր փոփոխությունից: Իրանցիները պնդում են, թե երկուաբթի օրն իրենց արձակած հրթիռը ի վիճակի է հատուկ ծրագրի շնորհիվ տիեզերք հասցնել թեթեւ արբանյակ:

Իրանի պետական հեռուստատեսության հաղորդման համաձայն, հիշյալ հրթիռը կարող է երկրից 250-500 կմ հեռավորության վրա ուղեծիր դուրս բերել թեթեւ արբանյակ: Երկրի տիեզերական գործակալության տնօրեն Ոզա Թաշիրոյի խոսքերով, հնարավոր է ուղեծիր դուրս բերել տեղական կամ մահմեդական ուրիշ երկրների արբանյակներ: «Բայց դա այնքան էլ շուտ չի լինի», ընդգծել է Թաշիրոյը, որի խոսքերը մեջբերում է «Լիբերասիոն» թերթը:

Իսրայելի տիեզերական գործակալության տնօրեն, պրոֆեսոր Յիցհակ Բեն Իսրայելի կարծիքով, իրանցիները ի վիճակի չեն մոտ ժամանակներս արբանյակ արձակել եւ նման լուրեր տարածում են՝ վախենալով իրենց միջուկային օբյեկտների վրա հարձակումից:

Սակայն Արեւմուտքը լրջորեն անհանգստացած է իրանցիների հայտարարությունից: Եթե վերջինս ճշմարիտ է, ապա դա նշանակում է Իրանի միջուկային ծրագրի ուղղության փոփոխություն: Ներկայումս մեծ տերությունները ժամկում են հակահրանգական նոր պատժամիջոցներ եւ թեհրանից պահանջում են դադարեցնել ուրանի հարստացումը:

Սիրիա-Լիբանան դիվանագիտական հարաբերություններ

«Հզբոլլահ»-ստունիներ համաձայնագիր

ՄԱԿ-ի կանոնադրությանը եւ միջազգային իրավունքի նորմերին համապատասխան Սիրիան եւ Լիբանանը հաստատում են դիվանագիտական հարաբերություններ դեսպանների մակարդակով: Այդ մասին տեղեկացնում է Փարիզի «Մոնդ» օրաթերթը:

Համապատասխան հայտարարությամբ արդեն հանդես է եկել Սիրիայի նախագահ Բաշար Ասադի խորհրդականներից մեկը: Ավելի վաղ Դամասկոսում Ասադը բանակցել է Լիբանանի նախագահ Միշել Սլեյմանի հետ:

Դիվանագիտական աղբյուրների տվյալներով, բանակցությունների ընթացքում կողմերը պայմանավորվել են երկու երկրներում բացել դեսպանատներ, ճանաչել են սահմանազատման, Սիրիայում պահվող լիբանանցի կալանավորների, Լիբանանում գործող պատերազմյան զինված խմբավորումների հարցը:

Ավելի քան 60 տարի առաջ Սիրիան եւ Լիբանանը հռչակեցին Ֆրանսիայից իրենց անկախությունը, բայց մինչեւ օրս պատասխանատու դիվանագիտական հարաբերություններ չէին հաստատել:

Չնայած դրան, Սիրիան ակտիվորեն միջամտում էր Լիբանանի քաղաքական կյանքին: Լիբանանի քաղաքացիական պատերազմի սկզբից մեկ տարի անց՝ 1976-ին սիրիական զորքը Լիբանանի նախագահի հրավերով մտավ այդ երկիր եւ հեռացավ միայն 2005-ի աշնանը՝ Ռաֆիկ Հարիրիի սպանությանը հաջորդած բողոքի ցույցերից հետո:

Լիբանանցի արեւմտյան մի շարք գործիչներ մինչեւ օրս Սիրիային մեղադրում են Լիբանանի քաղաքական իրադրությունն աղակալունացնելու փորձերի մեջ: Կասկածներ կան, թե Սիրիայի հատուկ ծառայությունները մեղսակից են Հարիրիի սպանությանը:

Լիբանանի ներքաղաքական կյանքում օգոստոսի 18-ին տեղի է ունեցել մեկ ուրիշ կարեւոր իրադարձություն: Ասոշիեյթեդ պրես եւ Ֆրանսպրես գործակալությունները հաղորդում են, որ շիա արտասահմանների «Հզբոլլահ» շարժումը համաձայնագիր է ստորագրել երկրի սուննիական խմբավորումների հետ: Համաձայնագրի նպատակն է թուլացնել լիբանանցի սուննիների եւ շիաների դիմակայությունը, որոնցից չկրկնվեն մասնավորապես 2008-ի մայիսյան բախումները, երբ հարյուրից ավելի մարդ սպանվեց:

Համաձայնագիրն ստորագրած իսլամական խմբավորումները պարտավորվում են չհարձակվել մահմեդականների վրա: Սուննիների կողմից համաձայնագիրն ստորագրել են սալամիստական մի քանի խմբավորումների ներկայացուցիչներ:

«Հանգուցալուծումներ»

Ի հիշատակ Մարկոս Գրիգորյանի մահվան տարելիցի



Անցած տարի ամռան այս օրերը ողբերգական էին Մարկոս Գրիգորյանի համար. ամենածանրը, որ կարող է կատարվել ստեղծագործողի կյանքում՝ մի անհոգ ճծիծաղ՝ նվիրական երազանքներին... Հայրենիում եղած «վերաբերմունքի» վերջին ակորդներն անհետորեն դաջեց էին: Գողության համար իր տուն ներխուժած սահակները դաժանորեն ծեծի ենթարկեցին, այնուհետև տեղափոխվեց հիվանդանոց, որից հետո կարճ ժամանակ անց մահացավ ծանոթագույն ադրումների մեջ, հայրենիում սեփական բանգարան ունենալու անավարտ փափագներում:

Մարկոս Գրիգորյանի՝ Հայաստանին նվիրված արժեքավոր հավաքածուն (աղբյուրի նմուշներ, հնաստիպ գոգգեր, ձեռագրեր, գրքեր, կտավագներ, նկարներ, կենցաղային իրեր եւ այլն) ժամանակավորապես, բայց փաստացի արդեն 15 տարի է՝ հանգրվանել է Ցարենցի անվան գրականության եւ արվեստի թանգարանի ցուցասրահներում եւ շարունակում է սպասել իր մշտական կացարանին:

Մարկոս Գրիգորյանը բազմաշնորհ արվեստագետ է, հավաքածուող, նկարիչ, կինոարտիստ: Իրանի ժամանակակից արվեստի հիմնադիրներից է, այստեղ ունեցավ հեղեղումներ, ու մեծապես հարգանք ու ոգեկոչանք է վայելում: Նա ստորագրի հիմնադրեց նաեւ Նյու Յորքում: Իրեն արվեստում նորարարության ջատագով, ԱՄՆ-ում 60-ականներին սկզբնավորեց հողանկարչության ուղղությունը՝ կերտարվեստում իրեն բնանյութ առաջինը օգտագործելով հողի ու մոխրի խառնուրդը: Մ. Գրիգորյանի ստեղծագործությունների մեծ մասը գտնվում է Նյու Յորքում, ինչպես նաեւ ԳԱԹ-ի Միջին Արեւելի ոյայնանական անունով թանգարանում:

Մահվան տարելիցի կառակցությամբ նկարիչների միության սահում կազմակերպված երեկվա ցուցահանդեսը հիշատակի տուրք է արվեստագետի գործին, նրա նվիրումին, անավարտ երազանքին: Ցուցահանդեսի կազմակերպիչը, համակարգողը Մարկոսի հետ երկար տարիներ համագործակցած, նրա արվեստի գիտակ ու նվիրյալ Ջառա Մոկացյանն է: «Հանգուցալուծումներ» խորագրով ցուցահանդեսին ներկայացված է Մարկոս Գրիգորյանից 9 գործ («Հնձած արտեր», «Երկրաբարձի զոհերի հիշատակին», «Վերածնունդ» եւ այլն), նաեւ հայաստանցի այն նկարիչների աշխատանքներից, որոնց ստեղծագործությունները հայեցակարգային առնչակցություններ ունեն Մարկոս Գրիգորյանի արվեստի հետ: Այս 12 նկարիչներից շատերը Մարկոսի հետ ժամանակին ցուցադրվել են (Ռուբիկ Գրիգորյան, Սարգիս Համալբաշյան, Արմեն Գրիգորյան, Վահան Ռումելյան, Սամվել Բաղդասարյան, Առարատ Սարգսյան եւ ուրիշներ), իսկ Թենի Վարդանյանի, Գայանե Խաչատրյանի կերտագունային աշխարհը ներքին խոհակցության, երկխոսության մեջ է Մարկոսի աշխատանքներին, նրա կյանքի փիլիսոփայությանը: Այսպես է մեկնաբանում Մարկոսի եւ 12 նկարիչների համատեղ այս ցուցադրությունը ԳԱԹ-ի «Միջին Արեւելք» ժամանակավոր ցուցադրության վարիչ Ջառա Մոկացյանը:

Ցուցահանդեսը հովանավորել է մշակույթի նախարարությունը, նկարիչների միության աջակցությամբ:

Մ. ԲԱԴԱԼՅԱՆ

«Մեկ ազգ, մեկ մշակույթ» համահայկական փառատոնը շարունակվում է

«Ազգի» ընթերցողներին ներկայացրել ենք «Մեկ ազգ, մեկ մշակույթ» համահայկական փառատոնի շրջանակներում անցկացված «Սփյուռքահայ գրողների 4-րդ համահայկական համաժողովի» եւ «Ոսկե ծիրան» 5-րդ միջազգային կինոփառատոնի աշխատանքները: Օգոստոսի 18-ին փառատոնի մասնակիցները այցելեցին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին: Վեհարանում նրանց հետ հանդիպեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ վեհափառ հայրապետը կոմիտեի նախագահ Հրանուշ Հակոբյանը, կարեւորելով «մենք»ի գաղափարը ու միասնության ամրապնդումը: Ողջույնի ուղերձ էր հղել ու հաջողություններ մաղթել նաեւ Համաշխարհային հայկական կոնգրեսի եւ Ռուսաստանի հայերի միության նախագահ, ՅՈՒՆԵՍԿՕ-ի բարի կամքի դեսպան Արա Աբրահամյանը: 5-6 օրերի ընթացքում կընթանան 14-15 միջոցառումներ, որոնցից 10 մարզերում եւ Արցախում: Բացման ու փակման

եւ օրհնության կարգից հետո իր խոսքում կարեւորեց ազգահավաք ձեռնարկը եւ մաղթեց, որ «Տերը ամենախնամ իր Աջով պահպանի աշխարհասփյուռ հայությանը, շնորհի բազում հաջողություններ՝ առավել արդյունաբերելու հայ մշակույթը ձեր հավասավոր հոգու եւ մտի արգասիքներով»:

Այս տարվա ինքնագործ մշակութային փառատոնին մասնակցում են 16 երկրներից ժամանած շուրջ 1000 ներկայացուցիչներ: Ինչպես նախորդ փառատոներին, այս մեկին էլ ամենամեծ պատվիրակությունը ժամանել է ՈՒԴ (240), այնուհետեւ Վրաստանից (199) եւ Իրանից (172): Փառատոնին մասնակցում են նաեւ Լիբանանից, Թուրքիայից, Բելառուսից, Սիրիայից, Ղազախստանից, Հունգարիայից, Բուլղարիայից, ԱՄՆ-ից, Սերբիայից:

Այս տարի ՀՀ մշակույթի նախարար Հասմիկ Պողոսյանի առաջարկով փառատոնը փոխել է իր ձեւաչափը եւ հինգ ամիսների ընթացքում կկայանան տարբեր բնագավառների ներկայացուցիչների համատեղ համահայկական միջոցառումներ: Ինչպես տեղեկացրեցին հիմնադրամի գործադիր տնօրեն Թամար Պողոսյանն ու գեղ. ղեկավար Արմեն Մանուկյանը, «Փառատոնը լավ հնարավորություն է ընձեռնում, իրարից սովորելու ու հայ մշակույթը օտար երկրներում սերունդներին փոխանցելու համար»:

Փառատոնի երգանակներում հանդարտության բոլոր մարզերում եւ Արցախում կանցկացվեն «Փառատոնի օր» միջոցառումների շարք, որի ընթացքում մասնակիցները կեանոթանան մարզերի պատմամշակութային ժառանգությանը, բնակչության առօրեակերտին ու միջավայրին:

Փառատոնի պատասխանական բացումը կայացավ Ա. Սոֆենդիարյանի անվան օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնում: Ողջույնի ուղերձ էր հղել ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը եւ կարեւորելով նման փառատոնի անցկացումը, նշել էր. «Հայրենիքի եւ գաղթօջախների բոլոր տարբերություններով հանդերձ՝ մեկ ազգի միասնական մշակույթի գարկերակը պետք է բաբախի համաչափ եւ զուգընթաց»: Մասնակիցներին ողջունեց ՀՀ ԱԳՆ Սփյուռքի հարցերով պետական նախարար Հրանուշ Հարությունյանը, նրա նշմարումի, անավարտ երազանքին: Ցուցահանդեսի կազմակերպիչը, համակարգողը Մարկոսի հետ երկար տարիներ համագործակցած, նրա արվեստի գիտակ ու նվիրյալ Ջառա Մոկացյանն է: «Հանգուցալուծումներ» խորագրով ցուցահանդեսին ներկայացված է Մարկոս Գրիգորյանից 9 գործ («Հնձած արտեր», «Երկրաբարձի զոհերի հիշատակին», «Վերածնունդ» եւ այլն), նաեւ հայաստանցի այն նկարիչների աշխատանքներից, որոնց ստեղծագործությունները հայեցակարգային առնչակցություններ ունեն Մարկոս Գրիգորյանի արվեստի հետ: Այս 12 նկարիչներից շատերը Մարկոսի հետ ժամանակին ցուցադրվել են (Ռուբիկ Գրիգորյան, Սարգիս Համալբաշյան, Արմեն Գրիգորյան, Վահան Ռումելյան, Սամվել Բաղդասարյան, Առարատ Սարգսյան եւ ուրիշներ), իսկ Թենի Վարդանյանի, Գայանե Խաչատրյանի կերտագունային աշխարհը ներքին խոհակցության, երկխոսության մեջ է Մարկոսի աշխատանքներին, նրա կյանքի փիլիսոփայությանը: Այսպես է մեկնաբանում Մարկոսի եւ 12 նկարիչների համատեղ այս ցուցադրությունը ԳԱԹ-ի «Միջին Արեւելք» ժամանակավոր ցուցադրության վարիչ Ջառա Մոկացյանը:

Ցուցահանդեսը հովանավորել է մշակույթի նախարարությունը, նկարիչների միության աջակցությամբ:

Մ. ԲԱԴԱԼՅԱՆ

«Մեկ ազգ, մեկ մշակույթ» համահայկական III փառատոնի մասնակիցներին

Սիրելի հայրենակիցներ

Համաշխարհային հայկական կոնգրեսի, Ռուսաստանի հայերի միության եւ իմ կողմից տրանց ողջունում եմ «Մեկ ազգ, մեկ մշակույթ» համահայկական III փառատոնի մասնակիցներին:

Ավանդական դարձած այս փառատոնը մի կարեւոր միջոցառում է, որը կոչված է նպաստելու ճանաչողի բերումով հաճայն աշխարհով սփռված հայերի միավորմանը:

Հայտնի փաստ է, որ մշակույթը, ինչպես եւ հավատը, միտ հանդիսացել են այն ընդհանուրը, ինչը միավորել է հայերին, անկախ նրանց բաղադրական հայացքներից եւ սոցիալական վիճակից: Այսօր էլ մշակույթը ծառայում է սերնդից սերունդ փոխանցված ազգային իմունության, լեզվի, գրականության, ավանդույթների եւ մյուս ազգային արժեքների պահպանմանը եւ զարգացմանը:

Մշակույթը սփյուռքը մեր մայր հայրենիքին՝ Հայաստանին կապող կարեւորագույն օղակներից մեկն է եւ նպաստում է տարբեր երկրներում բնակվող մեր ժողովրդի գոյատեւմանը:

Փառատոնի նշանակությունը կարեւորվում է նաեւ նրանով, որ անց է կացվում Հայաստանի Հանրապետության նախագահի բարձր հովանու ներքո:

Փառատոնի մասնակիցներին մաղթում եմ հաջողություններ եւ ստեղծագործական նվաճումներ ի փառս մեր ազգային արվեստի հետագա զարգացման:

Ուրանց ձեր՝

ՍԵՐԺ ՍԱՐԳՍՅԱՆ,
Համաշխարհային հայկական կոնգրեսի եւ Ռուսաստանի հայերի միության նախագահ
ՅՈՒՆԵՍԿՕ-ի բարի կամքի դեսպան
17 օգոստոսի, 2008 թ.

«Մեկ ազգ, մեկ մշակույթ» փառատոնը Լոռու մարզում

Օգոստոսի 17-ին ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի հովանու ներքո մեկնարկեց «Մեկ ազգ, մեկ մշակույթ» համահայկական մշակութային 3-րդ փառատոնը, որը կազմակերպել է ՀՀ արտաքին գործերի եւ մշակույթի նախարարությունների, «Մեկ ազգ, մեկ մշակույթ» հիմնադրամը: Օգոստոսի 19-ին «Փառատոնի օր» անցկացվեց Լոռու մարզում: Փառատոնի մասնակիցներին Սոչիայի քաղաքի մուտի մոտ աղ ու հացով դիմավորեցին Լոռու փոխմարզպետ Աղվան Վարդերեսյանը, Սոչիայի քաղաքապետ Գագիկ Սահակյանը, պատասխանատու այլ անձինք: Այնուհետեւ հյուրերը ծաղկեփնջակ դրեցին Սոչիայի երկրաբարձի զոհերի հիշատակին նվիրված հուշարձանին: Սոչիայից փառատոնի մասնակիցները մեկնեցին Վանաձոր, որտեղ այցելեցին Գեղագիտության ազգային կենտրոնի Վանաձորի մասնաճյուղ, ծանոթացան տեղացի փորձիչների աշխատանքներին: Կենտրոնի տնօրեն Կարինե Գլոյանը հայկական խորհրդանիշ-նուռ նվիրեց փառատոնի մասնակիցներին: Փառատոնի խորհրդանիշ Նարեն եւ Նարեկը մեծ ոգեւորությամբ խոսեցին հյուրընկալության մասին՝ նշելով, որ «Մեկ ազգ, մեկ մշակույթը» ոչ միայն միավորում է մեր ազգն ու մշակույթը, այլեւ հնարավորություն է տալիս ծանոթանալու միմյանց հետ, ճաշակելու ու ճանաչելու նաեւ սփյուռքի մեր հայրենակիցներին: Մշակույթը հավաքական գաղափար է: Մարզերում եւս ստեղծվում են մշակութային մեծ արժեքներ:

Այնուհետեւ փառատոնի պատվիրակների մասնակցությամբ Վանաձորի Շաուլ Ազնավուրի անվան մշակույթի պալատում կայացավ համերգ: Հյուրերին ողջունեց Վանաձորի Սուրբ Գրիգոր Նարեկացի եկեղեցու հոգեւոր հովիվ տեր Վահան քահանա Ազարյանը: Գուգարաց թեմի առաջնորդ Սեբուհ Եռիսկոպոս Չուլջյանի օրհնությունը հղելով մասնակիցներին՝ նա ասաց.

«Ամեն մեկս մեր մեջ կրում ենք հավիտենական այն արժեքները, որ փոխանցվել են սերնդեսերունդ: Ազգը 3 հասկացություն ունի՝ հայրենիք, կրոն, մշակույթ: Մեր մշակույթով մենք զրանում եւ դառնում ենք մեկ ամբողջություն: Թող օրհնյալ լինի փառատոնի ընթացքը, եւ հայ երգն ու պարը երկար տարիներ մեր հոգիներում»:

Ա. Վարդերեսյանը, մարզպետ Արամ Զոհրաբյանի եւ մարզի բնակչության անունից շնորհակալություն հայտնելով փառատոնի կազմակերպիչներին, ասաց. «Սփյուռքում մենք բոլորս էլ ունենք ընկերներ, բարեկամներ: Փառատոնի նպատակն է՝ նրանց վերադարձնել իրենց ակունքներին: Շնորհակալություն սփյուռքի մեր գործիչներին, որ կարողանում են հայի ոգին բարձր պահել եւ մեր երեխաներին հայ դաստիարակել: Մեր ազգային արժեքները սփյուռքում կարողանում ենք պահպանել մեր մշակույթով»:

Վանաձորում ելույթ ունեցան Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պարի պետական համույթը (գեղ. ղեկավար՝ ժողովրդական արտիստ Ազոռ Բաբայան), Ռուսաստանի Դաշնության Մոսկվա քաղաքի «Հայորդիք» երգի ու պարի համույթը (գեղ. ղեկավար՝ Անահիտ Սարգսյան) եւ անհատ կատարողներ Ուկրաինայի Կիեւ քաղաքից՝ երգչուհի Լուսինե Քոչարյանն ու դաշնակահար Արսեն Յակովենկոն: Համերգն ավարտվեց Լուսինե Քոչարյանի՝ փառատոնին նվիրված «Մեկ ազգ, մեկ մշակույթ» երգով:

Հանդիսատեսից բացի մեծ ոգեւորություն էին ապրում նաեւ փառատոնի մասնակիցները, որ գտնվում են հայրենիքում, ծանոթանում նրա մշակույթին եւ ծանոթանում հայրենակիցների հետ:

Վանաձորից փառատոնի մասնակիցները մեկնեցին Դսեղ, այցելեցին Ամենայն հայոց բանաստեղծ Հովհաննես Թումանյանի տուն-թանգարան:

ՄԵՂՐԵԼ ՄԻԿԱՅԵԼՅԱՆ,

Պեկինյան օլիմպիադան ամենահաջողվածներից է հայ մարզիկների համար

Մեր հավաքականի հաշվեկշռում 5 բրոնզե մեդալ կա

Այս օրերին մարզասերների ուշադրության կենտրոնում Պեկինում ընթացող 29-րդ ամառային օլիմպիական խաղերն են: Թեեւ մրցումները դեռ չեն ավարտվել, սակայն արդեն կարելի է փաստել, որ պեկինյան օլիմպիադան բավական հաջող էր հայ մարզիկների համար, որոնք այսօրվա դրությամբ արդեն 5 բրոնզե մեդալ են նվաճել: Այս հաջողությունն ավելի ծանրակշիռ է դառնում, եթե համեմատելու լինենք նախորդ երկու օլիմպիադաներում մեր մարզիկների ելույթների հետ: Հիշեցնենք, որ 2000-ին Սիդնեյում մեր մարզիկները նվաճել էին ընդամենը մեկ բրոնզե մեդալ (ծանրոցի Արսեն Մելիքյան), իսկ չորս տարի առաջ Աթենքից հայրենիք էին վերադարձել ձեռնունայն: Անշուշտ, հայ մարզասերներն ուզի ունեն միայն բրոնզե մեդալ ժառանգեց: Տիգրանը երկամարտում ցույց տվեց 338 կգ (153+185) արդյունք՝ անձնական ավելի ծանր հաշի դասում արծաթե մեդալը զիջելով Նույնմիսի ցուցանիշի հասած Ֆրանսիացի Վենսելաս Դաբայային: Գեւորգը երկամարտում ցույց տվեց 360 կգ (165+195) արդյունք, ընդ որում դրկում վարժությունում միայն 3-րդ մոտեցմամբ հաղթահարեց նախնական հաշը, այլապես 0 կստանար: Մինչեւ 77 կգ հաշային կարգում մեր երկրորդ դասվիրակը՝ **Արա Խաչատրյանն** էլ ընդամենը 2 հաջող փորձ կատարեց եւ երկամարտի 353 կգ (162+191) արդյունքով գրավեց 7-րդ տեղը: Ավելի վստահ հանդես եկավ **Տիգրան Վարդանի Մարտիրոսյանը** (85 կգ): Նա 5 փորձերից երեքը հաջողությամբ ավարտեց՝ երկամարտում ցույց տալով 380 կգ (177+203) արդյունք: Քաջալերելի այս կարգում հանդես եկած **Էդգար Գեւորգյանը** դրկում վարժությունում բավական լավ արդյունքի էր հասել (176 կգ), սակայն հրամում չկարողացավ իրեն ենթարկել 196 կգ-անոց ծանրոցը եւ 0 ստացավ:

Կանանց մրցավեճում մեր միակ մասնակիցը **Հռիփսիմե Խուրշուդյանն** էր: Նա վերջին դասին էր օլիմպիադայի մասնակցության իրավունք ստացել՝ փոխարինելով հիվանդացած **Մելինե Դալուզյանին**: Ուստի Հռիփսիմեից սպասելիքներն առանձնապես մեծ չէին, հանի որ նա լիովին պատրաստ չէր մրցումներին: Թեեւ Հռիփսիմեն չորս մոտեցում հաջող կատարեց, սակայն երկամարտի արդյունքը՝ 235 կգ (105+130) նրան հնարավորություն ընձեռեց զբաղեցնելու միայն նախավերջին՝ 11-րդ հորիզոնականը:

Հայաստանցի չորս բռնցքամարտիկներից մրցասարքում մնացել է 60 կգ հաշային **Հրայրի Ջավախյանը**: Երեկ նա հաջող եզրափակիչում պետք է մրցեր կորեացի Բայկ Տոնսուի հետ: Սակայն հիվանդության պատճառով կորեացին ոչնչ դուրս չեկավ եւ մեր բռնցքամարտիկը մնաց

ARMENPRESS.GE

Իրենց պայքարն են սկսել ազատ ոճի ըմբիշները: Մեր երկիրն այդ մրցումներում ներկայացնում են երեք ըմբիշներ: Առաջինը մրցագորգ դուրս եկավ 60 կգ հաշային **Մարտին Բերբերյանը**: Նա 0-4 հաշվով պարտություն կրեց Կանադայի ներկայացնող ադրբեջանցի Սաիդ Ազարբայջանիից եւ դուրս մնաց մեդալների համար մղվող պայքարից: Ջեմիոնն հռչակվեց ռուսաստանցի Մավլետ Բաշիրովը՝ եզրափակիչում 3-1 հաշվով հաղթելով ուկրաինացի Վասիլի Ֆեդորիշինին:

Այսօր մրցագորգ դուրս կգա 66 կգ հաշային ըմբիշ **Սուրեն Մարկոսյանը**: Վաղը մեդալները կխաղարկեն 84 կգ հաշային ըմբիշները, որտեղ Հայաստանը ներկայացնելու է **Հարություն Ենոխյանը**: Վաղը մրցասարեզ դուրս կգա նաեւ մեր օլիմպիական հավաքականի վերջին պայմիրակը՝ նիզականետող **Մելիք Ջանոյանը**, որից իհարկե մեդալի ակնկալիքներ չկան:

Իսկ երեկ լոսանջելին Պեկինում իրենց ելույթներն ավարտած հայ մարզիկները վերադարձան հայրենիք: «Ազատ»-ը օրանավակայանում նրանք արժանացան ջերմ ընդունելության:

Օլիմպիական չեմպիոնուհի՝ աշխարհի ռեկորդով

Պեկինի օլիմպիադայի թթբեւ աթլետիկայի կանանց մրցաբարի գլխավոր իրադարձությունը տեղի ունեցավ ծողացատկի մրցումներում: Աթենքի օլիմպիադայի չեմպիոնուհի, աշխարհի բազմակի ռեկորդակրուհի Յելենա Իսինբաեւան գեղեցիկ ելույթ ունեցավ՝ օլիմպիական իր երկրորդ ոսկե մեդալին արժանանալով հաջաշխարհային նոր ռեկորդով:

Իսինբաեւան մրցումները սկսեց 4,70 մ բարձրությունից, երբ հինգ մարզուհիներ արդեն դուրս էին մնացել մեդալների համար մղվող պայքարից: Ոսկե մեդալի համար պայքարն ընթացավ Ելենա Իսինբաեւայի եւ Ջենիֆեր Սուլիհնսկու միջեւ: Վերջինս բավարարվեց 4,80 մ արդյունքով եւ արժանացավ արծաթե մեդալի՝ չկարողանալով հաղթահարել 4,90 մ բարձրությունը: Իսկ ահա Իսինբաեւան, որ 4,95 մ արդյունքով արդեն նվաճել էր ոսկե մեդալը, հաջողությամբ հաղթահարեց 5,05 մ բարձրությունը՝ սահմանելով աշխարհի նոր ռեկորդ:

Սկավառակի նետման մրցումներում հաղթող ճանաչվեց ամերիկուհի Ստեֆանի Բրաուն Թիֆֆոնը (64,74 մ): Տղամարդկանց հեռացատկի մրցումներում լավագույնը պանամացի Իրվին Առանդան էր՝ 8,34 մ: Ջենիացի Կիտրոդ Կիտրուսոն բոլորից արագ հաղթահարեց 3000 մ արգելավազը (8:10.34), իսկ 400 մ վազքում լավագույն արդյունքի հասավ ամերիկացի Անժելո Թեյլորը (47,25 վրկ): Կանանց 800 մ վազքի հաղթողը Ռենիացի Պաուլա Ցելիմոն էր (1:54.87):

ՀԱՅԱՍՏԱՆ-ԹՈՒՐՔԻԱ

Սկզբունքային մրցավեճ

Այսօր հիրավի մեծ ֆուտբոլի օր է երեւանում: Ժամը 21-ին «Հրազդան» մարզադաշտում Հայաստանի երիտասարդական հավաքականը Եվրոպայի երիտասարդական առաջնության ընտրական մրցաշարում կսկսի մրցավեճը Թուրքիայի իր հասակակիցների հետ: Դա երկու երկրների երիտասարդական հավաքականների միջեւ պատեհնական առաջին հանդիպումն է: Մուտքն ազատ է:

Թեեւ Հայաստանի հավաքականը չի հավակնում Եվրոպայի առաջնության եզրափակիչ փուլի ուղեգրերին, սակայն այսօրվա հանդիպումը սկզբունքային նշանակություն ունի նույն երկրների ազգային հավաքականների սեպտեմբերի 6-ին կայանալիք մրցախաղից առաջ: Մեր ֆուտբոլիստները պետք է ամեն ինչ ներդնեն դժվարին ենթությունից պատվով դուրս գալու համար: Թուրքիայի երիտասարդական հավաքականը ընտրական 2-րդ խմբի պոտենցիալ առաջատարն է: Թուրքերը տնել են չորս հաղթանակ, մեկ խաղ ավարտել են ոչ-ոքի եւ 13 միավորով ընթանում են 2-րդ տեղում: Իսկ այսուսակը 14 միավորով գլխավորում է Չեխիայի ընտրանին, որը սակայն մեկ խաղ ավելի է անցկացրել: Սեպտեմբերի 6-ին Թուրքիայի երիտասարդական հավաքականը հյուրընկալելու է չեխերին, իսկ երեք օր անց սեփական հարկի տակ մրցելու է ՀՀ հավաքականի հետ:

Հայաստանի երիտասարդական հավաքականը նախավերջին՝ 4-րդ տեղում է: Մեր ֆուտբոլիստները 2 անգամ հաղթել են խմբի հետնապահ Լիխտենշտեյնի հավաքականին եւ ոչ-ոքի խաղացել չեխերի հետ: Ընտրական մրցաշարը մեր ընտրանին սկսեց Լիխտենշտեյնի (1-0) եւ Ուկրաինայի (0-4) հավաքականների հետ հանդիպումներով՝ հանդես գալով Սամվել Պետրոսյանի գլխավորությամբ: Հետագա հանդիպումներում հավաքականը գլխավորում էր Վարուժան Սուքիասյանը:

Այսօրվա խաղի նախապատրաստությունը մեր երիտասարդ ֆուտբոլիստները սկսել են օգոստոսի 15-ից: Վարուժան Սուքիասյանն ուսումնամարզական հավաքի էր հրավիրել 24 ֆուտբոլիստի: Հավաքականի կորիզը կազմում են «Փյունիկի» ֆուտբոլիստները: Կան նաեւ նորեկներ արտերկրից: Առաջին անգամ հավաքական են հրավիրվել Մոսկվայի «Լոկոմոտիվի» փոխարինողների կազմում արդյունավետությամբ աչքի ընկնող հարձակվող Հովհաննես Գոհարյանը եւ Մարսելի «Օլիմպիկի» հայազգի ֆուտբոլիստ Վարանց Բզդիկյանը: Երկարատեւ ընդմիջումից հետո կրկին երիտասարդական հավաքական է հրավիրվել Էդգար Մանուչարյանը, որը նաեւ ազգային հավաքականի թեկնածու է:

Ահա հավաքի հրավիրված ֆուտբոլիստների ցանկը:

Դարպասապահներ՝ Գրիգոր Մելիքսեթյան («Փյունիկ»), Գեւորգ Պրազյան («Արարատ»), Մարտիկ Մկրտումյան («Կիլիկիա»):

Պաշտպաններ՝ Արթուր Ստեփանյան («Ցեռնոմորեց», Նովոռոսիյսկ, Ռուսաստան), Հայկ Չիլինգարյան, Կարեն Խաչատրյան, Արսեն Անդրիկյան (բոլորն էլ՝ «Փյունիկ»), Վահե Մեհրաբյան («Արարատ»), Գագիկ Դաղբաշյան («Բանանց»):

Կիսապաշտպաններ՝ Հենրիխ Մխիթարյան, Կառլեն Մկրտչյան, Արթուր Եդիգարյան, Նորայր Սահակյան, Գեւորգ Ղազարյան (բոլորն էլ՝ «Փյունիկ»), Արամ Բարեղամյան, Մարգիս Կարապետյան (երկուսն էլ՝ «Բանանց»):

Հարձակվողներ՝ Արսեն Բալաբեկյան, Նորայր Գյոզալյան (երկուսն էլ՝ «Բանանց»), Վարդան Պետրոսյան («Փյունիկ»), Ալեքսանդր Պետրոսյան («Գանձասար»), Գեւորգ Նազարյան («Արարատ»), Հովհաննես Գոհարյան («Լոկոմոտիվ», Ռուսաստան), Էդգար Մանուչարյան («Այաքս», Հոլանդիա), Վարանց Բզդիկյան («Օլիմպիկ», Ֆրանսիա):

Հայտարարություն

1. ՀՀ ԳԱԱ «Ծրագրավորողների ազգային ընտրություն» հայտարարում է նորագույն հանձնաժողովներ ստանալու նպատակով հետեւյալ ֆոնդերի համար

2. Նրդաստիանական փոխանցումների բաժին փոխանցում – 4.0

3. Մասնագիտանական, հետազոտական եւ փորձարարական փոխանցումների բաժին փոխանցում – 1.0

4. Սնունդանական եւ հատկապանական փոխանցումների բաժին փոխանցում – 1.0

5. Ընտանեկանթերթանական փոխանցումների բաժին փոխանցում – 2.0

6. Արտանձանական փոխանցումների բաժին փոխանցում – 2.0

7. Ֆինանսիստական, դիմանկարային, տնտ. եւ արդիականացման փոխանցումների բաժին փոխանցում – 3.0

8. Հոլանդական փոխանցումների բաժին փոխանցում – 1.0

9. Անդային փոխանցումների բաժին փոխանցում – 1.0

10. Ծնունդային արժեքների փոխանցումների բաժին փոխանցում – 6.0

11. Եզրաբանական փոխանցումների բաժին փոխանցում – 1.0

ընդհանուր փոխանցումների բաժին պիտակով փոխանցումների բաժնում փոխանցում – 1.0

Կոնդանիական փոխանցումների բաժին փոխանցում

1. Իրականացնում է փոխանցումներ ըստ հետեւյալ նպատակների՝

1.1 Լանդներ եւ հանդերձներ

1.2 Նավակներ եւ հանդերձներ

1.3 Ինստրուներ, դիրքերներ, թիակ նեղտոնով եւ բունդար նրանց

1.4 Սոցիս ոլորտային հոդվածներ

1.5 Սոցանց, սոցանցնան նրանց, սիրելաբանի մանրաբերներ

1.6 Սիրաբերներ, գնանան ու բանաբերեմ հարեր

1.7 Պրանանանների, տեսնեն եւ ազ դրդիներին նրանց

1.8 Սիրաբերներ եւ հանանդրանների

1.9 Այլ նրանց

Մեծարարանական, հետազոտական եւ փորձարարական փոխանցումների բաժին փոխանցում

1. Իրականացնում է փոխանցումներ ըստ հետեւյալ նպատակների՝

1.1 Մեծարարանական

1.2 Գիրքանանի

Տնտեսագիտական եւ հասարակական փոխանցումների բաժին փոխանցում

1. Իրականացնում է փոխանցումներ ըստ հետեւյալ նպատակների՝

1.1 Հասարակական

1.2 Տնտեսագիտական մրցունդան

Շինարարանենթակայական փոխանցումների բաժին փոխանցում

1. Իրականացնում է փոխանցումներ ըստ հետեւյալ նպատակների՝

1.1 Շինարարանենթակայան

Արդարադատական փոխանցումների բաժին փոխանցում

1. Իրականացնում է փոխանցումներ ըստ հետեւյալ նպատակների՝

1.1 Արդարադատական

1.2 Ամենի բաժին դրդում

1.3 Դրանք հետագայում

Հոգեբանական, դիմանկարային, տնտ. եւ արդիականացման փոխանցումների բաժին փոխանցում

1. Իրականացնում է փոխանցումներ ըստ հետեւյալ նպատակների՝

1.1 Հոգեբանական

1.2 Դիմանկարային

1.3 Տնտեսանանդրական

Հոգեբանական փոխանցումների բաժին փոխանցում

1. Իրականացնում է փոխանցումներ ըստ հետեւյալ նպատակների՝

1.1 Անդրադարձների փոխանցում

1.2 Բանդրան հարդ բերել «նեռաբար» հանդարտեցրումների փոխանցում

1.3 Դրանական դիմանկարների փոխանցում

1.4 Սնունդի եւ տրվող հոդվածական սոսնձնաբանդրանների փոխանցում

1.5 Ինարդանական գրանդով փոխանցում

1.6 Տնտեսական եւ վարչական գրանդով փոխանցում

1.7 Դեռնանց եւ հնձաստանական փոխանցում

Սենդանի փոխանցումների բաժին փոխանցում

1. Իրականացնում է փոխանցումներ ըստ հետեւյալ նպատակների՝

1.2 Սենդանի

Մասնագիտանի արդիական փոխանցումների բաժին փոխանցում

1. Իրականացնում է փոխանցումներ ըստ հետեւյալ նպատակների՝

1.1 Վերադարձած բնագանքի հեռացուցում

1.2 Դեկտանով կիրառական արդիական բնագանքի հեռացուցում

Դիմանկարանդրանդրական փոխանցումների բաժին փոխանցում

1. Իրականացնում է փոխանցումներ ըստ հետեւյալ նպատակների՝

1.1 Ինարդական

Վերանանի բաժինների փոխանցումներ նանս՝

1. Իրականացնում են գիտատեսողական, գիտանանի կանան, գիտանդրական ուսանանների նրանանան գիտանանի փոխանցումների արդիականը եւ ուսանի բարելավումը

1.2 ՀՀ ինանդրության հանանան՝ ամանանդան 56 հնանդան եւ ազ դրանդանական գրանդրությունների, որանց դրանի վերանանում են փոխանցումներ սատարելու եւ սանանանոնա են նրանդրության ազգ հանար

Մրցանի մասնակցին նեռկայացվող դրանդան դրանանանի՝

1. ՀՀ հարանդրության

2. Բարեկրդան մասնանական կրդանդ

3. Սանանանանի մասնանական սատ՝ սանանդի 2 թերաս ատի կան սանանանի կարդով հանդանան փոխանդան ուսանդանով

4. Դանդանդան բարդանդրանդ հանդանող դանդանդրդ

5. Ընդ. հանդանդան սանդրանդեր հանդանող փանանդրդ

6. Ներանդանի դրանդ գրանդանդ, տանանդ նանանանանի սանդի բարդանդրանդ

Մրցանի մասնակցին նեռկայացվող բարեկրդ դրանդանանի՝

1. ՀՀ գիտանդրանների ազգային սկզբունքների հանանդանդ դրանանդի բարեկրդ ուսանդանդան հանանանդրանի կրդեր ազգանի գիտանդրական հանանանդրանի գիտանդրական դրանանդի ուսանդանդանի դրանանդ ուսանդանդրանի հանանդ

1. Նանանդրանդ գրանդրեր հետադրդ /Word, Excel, Access, Internet/

3. Օգտ ընդանի հետադրդ դրանդրդ է սանդանդ

4. Գիտանդան սանդանանի սանդանդրդ

Վերջնական ազգ նեռ սանանդրդանդ հանդանդանդանդ ազ հանդանդ դրանդանանի դրանդ:

Անդրանանանդ դրանանդանդ եւ սանդանանդանդ հանանանդի դրանանդանդ, սանդանդ 10000 դրամ

Սանանանդրդ, սանդանանդանդ գանդրդ (նանդրդ նանդ. ֆ. գրանդի դրանանդանդ հանդանդ գիտանդրդրդ դրանանդանդ դրանանդանդ դրանանդան

«Հրավերի նպատակը սոսկ ֆուտբոլային հանդիպում դիտելը չէ...

Բ-ԻՑ ԷՋ 8

«Նախագահ Աբդուլլահ Գյուլը կընդունի՞ Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանի՝ երկու երկրների ազգային հավաքականների ֆուտբոլային հանդիպումը Երևանում միասին դիտելու առաջարկը:

Դա Հայաստանի համար ունի կարևոր նշանակություն, որ հրավերը ճշգրտես օրակարգում են պահում: Այդ մասին են վկայում հրավերի հածը վայելելու (մեկ այլ տեսանկյունից մոռենալու դեռևում հածը հանելու) դրսևորումները, որոնք արտահայտվել են հայաստանյան կառավարության պատասխանատուներից մեկի վերջերս արած հայտարարությամբ, թե այս հրավերով մեզի 1-0 առաջ են անցել, գնդակը Թուրքիայի դաշտում է: Հայկական կառավարությունը երկխոսության դուռ բացելու նախաձեռնություն է համարում հրավերը:

Թեև Անկարան ամենևին չի անտեսում հրավերի հարցը, սակայն դա դեռևս հանգամանքների բերումով օրակարգային չի դարձել: Օրինակ, այդ ուղղությամբ որոշում ընդունելու նիստ ոչ նախագահի աշխատակազմում է գումարվել, ոչ էլ կառավարությունում, ինչը միանգամայն հասկանալի է: Անիսներ շարունակ «Առարություն եւ բարգավաճում» կուսակցության կանանցման խնդրով զբաղված կառավարությունը հազիվ էր արձակուրդ գնացել, հայտնվեց Կովկասում ծագած Վրաստան-Ռուսաստան ճգնաժամի հորձանուտում: Իրանի նախագահի այցը, աֆրիկյան երկրների գագաթաժողովը, ազգային անվտանգության խորհրդի առաջիկա նիստը, զինված ուժերի նորանշանակ զորահրամանատարների պաշտոնակալության արարողությունները, Կիպրոսում հակամարտող կողմերի սեպտեմբերի 3-ին սկզբնավորվող բանակցությունները հիմնական են տալիս ենթադրելու, որ Հայաստանի հրավերի մասին որոշումն Անկարայում կընդունվի վերջին օրը միայն, նույնիսկ՝ վերջին ժամերին:

Եթե հրավերի նպատակը սոսկ ֆուտբոլային հանդիպում դիտելը չէ, այլ Անկարան պետք է Երևանից ունենա որոշ ակնկալիներ, ինչպես նաեւ մտահոգություններ: Ցնցված Հայաստանի հետ հարաբերություններում ընդառաջ քայլեր կատարելու թուրքական կառավարության պատասխանատվությանը, հենց այդ մտահոգությունների պատճառով է, որ Գյուլի այցը դեռևս չի արժանանում ջերմ վերաբերմունքի:

Որոնք են այդ մտահոգությունները:

Անկարայի համար խնդիր չէ առաջին քայլը Երևանի նախանձած օրը եւ տեղում կատարելը: Այսինքն՝ 1-0 առաջ անցնելու Երևանի գոռոզամտությունն Անկարայում ոչ թե զայրույթ, այլ ծիծաղ է առաջացնում: Սակայն Երևանում նախագահ Գյուլի նկատմամբ հնարավոր վերաբերմունքը կարող է խնդիր դառնալ: Եթե Սարգսյանն իրեն դրսևորի որպես հյուրընկալ տանտեր, ապա դա կարո՞ղ է կանխորոշել նրա հրավերին հակադրվող հայկական սփյուռքի եւ դաշնակցական տարրերի հավանական սադրանքները: Գյուլին ուղղված սուր հարցերը կամ մարգարեական նրա դեմ հնարավոր սանձարձակությունները, թուրք ֆուտբոլիստների նկատմամբ անբարյացակամ եւ կոպիտ վերաբերմունքը էլ ավելի կվատթարացնեն սկզբնավորվող գործընթացը, եւ հայրենիք վերադառնալու դեռևում Գյուլը կդառնա նրա հայաստանյան այցին առանց այդ էլ հակադրվող ընդդիմադիր կուսակցությունների թիրախը:

Նախագահ Գյուլն անցյալ տարի Ադրբեջան կատարած այցի, իսկ անցյալ ամիս Ադրբեջանի եւ Վրաստանի նախագահներ Իլհամ Ալիեւի ու Միխեիլ Սաակաշվիլու հետ Կարսում երկաթուղու համատեղ նախագծի իրականացմանը նվիրված արարողության ժամանակ հաղորդել էր հետեւյալ ազդանշանը. «Եթե Հայաստանը տարաբերջանում ձգտում է միանալ համագործակցության նախագծերին՝ ձեռքելու համար խաղաղական եւ տնտեսական օգուտը, պետք է հարգի միջազգային իրավունքի նորմերը»: Դա նեռառում է երեք խնդիր. առաջինը Լեռնային Ղարաբաղի շրջանում Հայաստանի շարունակվող օկուպացիան է, երկրորդը՝ ցեղասպանության հայկական ոճրագործությունների առնչությամբ պատմաբանների համատեղ հանձնաժողով ստեղծելու վարչապետ Ռեջեպ Թայիփ Էրդողանի առաջարկն է, որն արժանացել է նաեւ ընդդիմության հավանությանը, երրորդը՝ պաշտոնական փաստաթղթերում տեղ գտած «Արեւմտահայաստան» կարգի արտահայտություններն են, որոնք ցույց են տալիս, որ Հայաստանը չի ճանաչում Թուրքիայի հետ առկա սահմանը: Անկարան համոզված է, որ համատեղ հանձնաժողովի կամ սահմանների, այսինքն՝ Թուրքիայի տարածային ամբողջականությունը ճանաչելու մասին հայկական կողմի որեւէ արտահայտությունը կհեշտացնի հրավերի ընդունումը:

Ի դեպ, իշխանական կառույցներում կան գործիչներ, որոնք ասում են. «Սիրիայում հրատարակվող քարեզներում Հաթայը (Ալեքսանդրետի սանջակ) առ այսօր նշվում է Թուրքիայի սահմաններից դուրս: Սակայն դա չի խանգարում այս երկրի հետ մեր հարաբերությունների զարգացմանը»: Ոմանք էլ հակադրվում են նրանց, ընդգծելով. «Այնուամենայնիվ, Սիրիան չէ, որ շրջում է դոնդոտ, որպեսզի առպահովի Թուրքիայի դեմ ուղղված ցեղասպանության բանաձեւերի ընդունումն այլ երկրների խորհրդարաններում»:

Ամփոփելու դեռևում կստացվի, որ ֆուտբոլային հանդիպման համար Երեւան գնալու դուռը փակ չէ Գյուլի առջեւ, սակայն դրա մինուսները պլուսներից շատ են: Եթե Անկարան համոզվի, որ Երեւանում Գյուլի՝ ֆուտբոլային հանդիպում դիտելու արդյունքները կհանգեցնեն դրական զարգացման, ապա Անկարան կարող է նպաստակահարմար գտնել նրա մասնակցությունը հասարակության հետ կապերի բնույթ կրող այս քարոզարշավին: Դրան կարող են նպաստել նաեւ ԱՄՆ-ի, Ռուսաստանի եւ Ֆրանսիայի պես Հայաստանին աջակից երկրները, եթե, իհարկե, գիտակցեն, որ Թուրքիա-Հայաստան հարաբերությունները ավելի արագ են հունի մեջ մտնելու ցեղասպանության ոճրագործությունների կապակցությունից ազատվելու դեռևում եւ այդ առումով խրախուսեն Երեւանին: Միայն այն ժամանակ կիմաստավորվի Սարգսյանի հետ նույն տրիբունայում Գյուլի ֆուտբոլային հանդիպում դիտելը»:

Հ.Ղ.

Մասնագիտություն, որն անհրաժեշտ է ամենուր

ԲՈՐՁՐԱԿԱՐԳ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ

Ավարտելով **եռամսյա դասընթացը** դուք կստանաք.

- հաշվապահությունը վարելու գիտելիքներ եւ կիրառական հմտություններ,
- հաշվապահական եւ հարկային հաշվառումը հմտորեն վարելու փորձ,
- մեկամսյա աշխատանքային պրակտիկա եւ առաջին աշխատանքի փորձ,
- աջակցություն աշխատանքի տեղավորման հարցում

Ավարտողներին տրվում է պետական նմուշի հավաստագիր:

«ԷԿՈՆՈՄԻԿԱ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔ» կենտրոն

«ԷԿՈՆՈՄԻԿԱ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔ» ԿԵՆՏՐՈՆ
Բարդությամբ 24դ.
ՀՀ Գիտությունների Ազգային Գրադարանի 6-րդ հարկ, 54-24-81

Մրցույթի հրավեր 094/08

ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի հայաստանյան գրասենյակը հայտարարում է մրցույթ՝ ՀՀ «Հոգեբուժական բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի նարկոլոգիական կլինիկայի հեռվերակազմակերպական կենտրոնի վերանորոգման աշխատանքներն իրականացնելու համար:

Մրցույթի մանրամասն հրավերին կարելի է ծանոթանալ ՄԱԶԾ-ի http://www.undp.am ինտերնետային կայքից կամ գնումների բաժնից՝ ք. Երեւան, Պետրոս Սյունյան 14 հասցեում: Դիմել Գրիգոր Ախնոյանին՝ հեռ. 56 60 73 (ներքին) 126, ժամը 14:00-16:00-ը:

Փաստաթղթերի ներկայացման վերջնաժամկետը՝ սեպտեմբերի 5, ժամը 17:00:

UNDP

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՄՐՑԱԿՑԱՅԻՆ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Պետական գնումների գործակալություն» ՊՈԱԿ-ն (պատվիրատու) ՊԳԳ - ՍԲԾՁԲ - 08/4 ծանկագրով կազմակերպում է մրցակցային բանակցություններ՝ **ՀՀ Սյունիքի մարզպետարանի կարիքների համար փողոցների եւ շենքերի տանիքների հիմնանորոգման աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերման նպատակով:** Հրավեր ստանալու համար անհրաժեշտ է 950 ՀՀ դրամ փոխանցել «Արբինինվեստբանկ» «Բեջ-գալ» ՍՊԸ-ի 247230066158 հաշվեհամարին եւ սույն հայտարարության հրապարակման օրվան հաջորդող 8 աշխատանքային օրվա ընթացքում դիմել պատվիրատուին հետեւյալ հասցեով՝ ք.Երեւան, Կոմիտասի պ., 54/բ, հեռ. 28-93-25, հանձնաժողովի քարտուղար Կ. Դանիելյանին:

Հրավերն անձին տրվում է անձը հաստատող փաստաթղթի, իսկ կազմակերպության անունից հանդես գալու դեպքում՝ նաեւ անձի լիազորությունները հավաստող համապատասխան փաստաթղթի հիման վրա: Հայտերը պետք է ներկայացնել մինչեւ դրանց բացման պահը՝ մրցակցային բանակցությունների հայտարարության հրապարակման օրվան հաջորդող օրվանից հաշված 10-րդ աշխատանքային օրը, ժամը 12.00-ն:

***

«Պետական գնումների գործակալություն» ՊՈԱԿ-ն (պատվիրատու) ՊԳԳ-ՍԲԱՀՁԲ-08/60 ծանկագրով կազմակերպում է մրցակցային բանակցություններ՝ **ՀՀ Սյունիքի մարզպետարանի կարիքների համար ՀՀ Սյունիքի մարզի Կապան քաղաքի բազմաբնակարան շենքերի հարթ եւ լանջավոր տանիքների հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով:** Հրավեր ստանալու համար անհրաժեշտ է 5850 ՀՀ դրամ փոխանցել «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ, «Հայջրնախագիծ ինստիտուտ» ՓԲԸ-ի N 1150000088680300 հաշվեհամարին եւ սույն հայտարարության հրապարակման օրվան հաջորդող 8 աշխատանքային օրվա ընթացքում դիմել պատվիրատուին հետեւյալ հասցեով՝ ք.Երեւան, Կոմիտասի պ., 54/բ, հեռ. 28-93-25, հանձնաժողովի քարտուղար Գ.Հուրոյանին:

Հրավերն անձին տրվում է անձը հաստատող փաստաթղթի, իսկ կազմակերպության անունից հանդես գալու դեպքում՝ նաեւ անձի լիազորությունները հավաստող համապատասխան փաստաթղթի հիման վրա: Հայտերը պետք է ներկայացնել մինչեւ դրանց բացման պահը՝ մրցակցային բանակցությունների հայտարարության հրապարակման օրվան հաջորդող օրվանից հաշված 10-րդ աշխատանքային օրը, ժամը 10.00-ն:

***

«Պետական գնումների գործակալություն» ՊՈԱԿ-ն (պատվիրատու) ՊԳԳ-ՍԲԱՀՁԲ-08/61 ծանկագրով կազմակերպում է մրցակցային բանակցություններ՝ **ՀՀ Սյունիքի մարզպետարանի կարիքների համար ՀՀ Սյունիքի մարզի Կապան քաղաքի Ա. Մանուկյան եւ Գ. Արզումանյան փողոցների հիմնանորոգման (2.4կմ) աշխատանքների ձեռքբերման նպատակով:** Հրավեր ստանալու համար անհրաժեշտ է 10500 ՀՀ դրամ փոխանցել «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ, «Հայջրնախագիծ ինստիտուտ» ՓԲԸ-ի N 1150000088680300 հաշվեհամարին եւ սույն հայտարարության հրապարակման օրվան հաջորդող 8 աշխատանքային օրվա ընթացքում դիմել պատվիրատուին հետեւյալ հասցեով՝ ք.Երեւան, Կոմիտասի պ., 54/բ, հեռ. 28-93-25, հանձնաժողովի քարտուղար Գ.Մարկոսյանին:

Հրավերն անձին տրվում է անձը հաստատող փաստաթղթի, իսկ կազմակերպության անունից հանդես գալու դեպքում՝ նաեւ անձի լիազորությունները հավաստող համապատասխան փաստաթղթի հիման վրա: Հայտերը պետք է ներկայացնել մինչեւ դրանց բացման պահը՝ մրցակցային բանակցությունների հայտարարության հրապարակման օրվան հաջորդող օրվանից հաշված 10-րդ աշխատանքային օրը, ժամը 11.00-ն:

***

«Պետական գնումների գործակալություն» ՊՈԱԿ-ն (պատվիրատու) ՊԳԳ-ՍԲԱՀՁԲ-08/62 ծանկագրով կազմակերպում է մրցակցային բանակցություններ՝ **ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարության կարիքների համար ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարության «Աշխատանքի եւ սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ» ՊՈԱԿ-ի նախկին հանրակացարանային մասնաշենքի հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով:** Հրավեր ստանալու համար անհրաժեշտ է 2290 ՀՀ դրամ փոխանցել «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ, «Հայջրնախագիծ ինստիտուտ» ՓԲԸ-ի N 1150000088680300 հաշվեհամարին եւ սույն հայտարարության հրապարակման օրվան հաջորդող 8 աշխատանքային օրվա ընթացքում դիմել պատվիրատուին հետեւյալ հասցեով՝ ք.Երեւան, Կոմիտասի պ., 54/բ, հեռ. 28-93-25, հանձնաժողովի քարտուղար Ջ. Մելիքսետյան:

Հրավերն անձին տրվում է անձը հաստատող փաստաթղթի, իսկ կազմակերպության անունից հանդես գալու դեպքում՝ նաեւ անձի լիազորությունները հավաստող համապատասխան փաստաթղթի հիման վրա: Հայտերը պետք է ներկայացնել մինչեւ դրանց բացման պահը՝ մրցակցային բանակցությունների հայտարարության հրապարակման օրվան հաջորդող օրվանից հաշված 10-րդ աշխատանքային օրը, ժամը 14.30-ն:

***

«Պետական գնումների գործակալություն» ՊՈԱԿ-ն (պատվիրատու) ՊԳԳ-ՍԲԱՀՁԲ-08/63 ծանկագրով կազմակերպում է մրցակցային բանակցություններ՝ **ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարության «Միայնակ տարեցների սոցիալական սպասարկման կենտրոն» ՊՈԱԿ-ի «Վեստաս օթեան» կացարանի հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով:** Հրավեր ստանալու համար անհրաժեշտ է 2350 ՀՀ դրամ փոխանցել «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ, «Հայջրնախագիծ ինստիտուտ» ՓԲԸ-ի N 1150000088680300 հաշվեհամարին եւ սույն հայտարարության հրապարակման օրվան հաջորդող 8 աշխատանքային օրվա ընթացքում դիմել պատվիրատուին հետեւյալ հասցեով՝ ք.Երեւան, Կոմիտասի պ., 54/բ, հեռ. 28-93-25, հանձնաժողովի քարտուղար Գ.Հուրոյանին:

Հրավերն անձին տրվում է անձը հաստատող փաստաթղթի, իսկ կազմակերպության անունից հանդես գալու դեպքում՝ նաեւ անձի լիազորությունները հավաստող համապատասխան փաստաթղթի հիման վրա: Հայտերը պետք է ներկայացնել մինչեւ դրանց բացման պահը՝ մրցակցային բանակցությունների հայտարարության հրապարակման օրվան հաջորդող օրվանից հաշված 10-րդ աշխատանքային օրը, ժամը 15.30-ն:

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ՀԱՏԵԳԱՇԱՐԵԼ՝ 58-29-60

Լուսանկարները՝ «Ազգ» օրաթերթ՝ ՍՊԸ, Երեւան, Հանրապետության 47: Պետական գրանցման վկայական՝ համար՝ 02 Ա N 047261, տրված՝ 17.02.00 թ.
Թողարկված պատվերանատու, գլխ. խմբ. Յակոբ Անանյան: Տպաքանակ՝ 3000, սառնագրված է տպագրության՝ 19.08.2008, գինը՝ 100 դրամ, տպագրում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում՝ Արտակունեաց 2: